

## **ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ Գագիկ Տեր-Յարությունյան**

Քաղաքակրթական գործունը միշտ էլ կարելուր, իսկ հաճախ առաջ-  
նային դեր է ունեցել ռազմաքաղաքական գլոբալ զարգացումներում:  
Սակայն որպես հստակ քաղաքական կատեգորիա՝ այն, թերևս, սկսեց  
օգտագործվել 1993-ից, երբ ամերիկյան Միջազգային հարաբերություն-  
ների խորհրդի կողմից հրատարակվող «Արտաքին քաղաքականություն»  
ամսագրում տպվեց Սենյուել Յանտինգտոնի «Քաղաքակրթությունների  
բախում» հոդվածը (հետագայում այն վերամշակվեց եւ հրատարակվեց  
որպես մենագրություն): Յամաձայն հեղինակի՝ արդի գլոբալ զարգա-  
ցումների հիմնական ուղղվածությունը (ասպեկտը) լինելու է միմյանցից  
տարբերվող քաղաքակրթական խմբերի ընդհարումը:

Ընդհանրապես, «քաղաքակրթություն» հասկացությունը բնութա-  
գրվում է որպես ազգերին բնորոշ որոշակի (ծագումնաբանական,  
լեզվական, կրոնական, մշակութային եւ այլն) հատկանիշների ընդհան-  
րություն: Միեւնույն ժամանակ, տարբեր հեղինակներ յուրովի են տալիս  
դրանց մեկնաբանությունն ու ցուցակը: Մեթոդաբանական նման տարա-  
կարծության հետեւանքով մի շարք հեղինակների մոտ մեռյալ եւ  
գոյություն ունեցող քաղաքակրթությունների կազմը եւ դրանց թիվը  
տարբերվում են միմյանցից: Քաղաքական հարթությունում նման խնդիր-  
ները, թերևս, այնքան էլ էական չեն. մասնավորապես՝ Յանտինգտոնը  
թվարկում է արդի 9 քաղաքակրթություններ, որոնք են՝ Արեւմտյան,  
Լատինաամերիկյան, Աֆրիկյան, Իսլամական, Չինական, Հինդուիստա-  
կան, Ուղղափառ, Բուդդիստական եւ ճապոնական:

Քաղաքակրթությունների նման դասակարգումը կարող է բազմաթիվ  
հարցերի տեղիք տալ, սակայն այն ենթարկվում է հստակ տրամա-  
բանության. նշված քաղաքակրթական միավորները տիրապետում են այս  
կամ այն չափի աշխարհաքաղաքական ներուժի եւ արդի միջազգային  
հարաբերություններում հանդիսանում են հիմնական դերակատարներ:

### **Քաղաքակրթություն եւ քաղաքականություն**

Ինչպես նշեցինք վերը, «Քաղաքակրթությունների բախում» աշխա-  
տության ի հայտ գալով «քաղաքակրթություն» հասկացությունը, որը  
նախկինում առավելապես պատմաբանների, փիլիսոփաների եւ մշակու-

թաբանների ուսումնասիրության առարկա էր, զգալի չափով տեղափոխվեց իրական քաղաքականության ոլորտ: Հանտինգտոնի հայեցակարգային բնույթի թեզը դրվեց ամերիկյան գլոբալ ռազմավարության հիմքում<sup>1</sup> եւ գաղափարական հարթությունում հիմնավորում է «հակասահաբեկչական պատերազմի» կարգախոսի ներքո ընթացող ԱՄՆ-ի (որը, համաձայն մեր եզրաբանության, ներկայացնում է ոչ թե դասական «արեւմտյան», այլ «անգլոսաքսոնյան-հրեական» քաղաքակրթությունը) եւ Իսլամական աշխարհի հակամարտությունը<sup>2</sup>:

Հայտնի է, որ ԱՄՆ-ի կողմից կիրառվող ռազմավարությունները զգալիորեն ազդում են ներկայի միջազգային հարաբերությունների ձեւի եւ բովանդակության վրա: Պետք է ընդունել, որ «քաղաքակրթական բախումների» ամերիկյան հայեցակարգը լրացուցիչ բարձրացրել է քաղաքակրթական գործոնի նշանակությունը. այդ ոլորտում ազգերի միջեւ եղած հակասությունները եւ ընդհանրությունները դարձել են կարեւոր, իսկ հաճախ՝ որոշիչ հանգամանք գաղափարախոսական, քաղաքական եւ անգամ տնտեսական հարաբերություններում: Այսօր ամենատարբեր երկրների ղեկավարների ելույթներում սովորական են դարձել քաղաքակրթական գործոնների վերաբերյալ հղումները: Կարելի է ամրագրել, որ այդ գործոնի թերազնահատումը եւ, առավել եւս, անտեսումը կարող են ծանր հետեւանքներ ունենալ ցանկացած մեծ կամ փոքր ազգի, կամ պետական միավորի համար: Միեւնույն ժամանակ, միշտ չէ, որ այս կամ այն ազգը կարող է միանշանակ պատասխանել, թե որ

<sup>1</sup> Ամերիկյան ժամանակակից քաղաքականության դոկտրինների մի զգալի մասը՝ գերկանխարգելիչ հարվածների հայեցակարգը, տեղեկատվական-հոգեբանական պատերազմները, Լյուիսի դոկտրինը (որը, փաստորեն, ներկայացնում է հայտնի «բաժանիր, որ տիրես» դրույթը) դասական ռազմավարությունում հայտնի թեզեր են, որոնք համակարգվել, արդիական եզրաբանություն եւ գիտական հիմնավորում են ստացել ամերիկյան «ուղեղային կենտրոնների» կողմից:

<sup>2</sup> Իրանի նախկին նախագահ Խաթամին, որպես հակակշիռ «քաղաքակրթությունների բախման» տեսության, առաջ քաշեց «քաղաքակրթությունների երկխոսության» հայեցակարգը: Սակայն պետք է ընդունել, որ այս կամ այն հավակնոտ հայեցակարգի ներդրումը գլոբալ քաղաքականության մեջ գլխավորապես կախված է ներդրողի ունեցած ընդհանրական ռեսուրսներից: Այդ համատեքստում իրանական մոտեցումը, ի տարբերություն ամերիկյանի, առայժմ մեծ տարածում չի գտնում եւ շոշափվում է հիմնականում գիտական-վերլուծաբանական շրջանակներում, երբեմն էլ՝ օգտագործվում քարոզչական դաշտում:

քաղաքակրթությանն է պատկանում եւ ըստ այդմ ձեւավորի իր արտաքին ու ներքին ռազմավարությունը:

Կան ազգեր, որոնք ոչ միայն չունեն հստակ պատկերացումներ իրենց քաղաքակրթական պատկանելության վերաբերյալ, այլեւ մասնատված են ըստ քաղաքակրթական կողմնորոշումների: Նշենք, որ նման երեւոյթը երբեմն աշխարհաքաղաքական որոշակի նպատակներով իրագործված արտաքին ազդեցությունների հետեւանք է: Նման իրավիճակում հայտնված ազգերը կամ դրանց միավորումները Հանտինգտոնը որակում է որպէս «պառակտված» քաղաքակրթություններ եւ, թերեւս, իրավացիորեն կանխատեսում է դրանց փլուզումն ապագայում: Ոչ վաղ անցյալում նման զարգացում տեղի ունեցավ Հարավսլավիայում. այդ երբեմնի զարգացած երկիրն այժմ անվանում են «ճախկին»: Նման երեւոյթի դասական օրինակ կարող է հանդիսանալ այսօրվա Ուկրաինան, որտեղ տեղի է ունենում ազգաբնակչության տարանջատում՝ ռուսական եւ արեւմտյան կողմնորոշումների հատկանիշով: Հարկ է նշել, որ քաղաքակրթական առումով չկողմնորոշված երկրների եւ ազգերի շարքին ոմանք դասում են նաեւ Հայաստանը եւ հայությունը: Նման մոտեցման համար որպէս հիմք ծառայում է այն հանգամանքը, որ ՀՀ եւ սփյուռքի այսօրվա քաղաքական եւ անգամ փորձագիտական ընտրանու շրջանակներում երբեմն հնչում են իրարամերժ մտքեր Հայաստանի եւ հայության քաղաքական/քաղաքակրթական կողմնորոշումների վերաբերյալ: Այդ երեւոյթը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով.

❖ ՀՀ աշխարհագրական դիրքը եւ օբյեկտիվորեն ձեւավորված քաղաքական իրավիճակը թելադրում են, որպէսզի երկրի քաղաքական դեկլարությունը վարի ճկուն քաղաքականություն՝ խուսանավելով խոշոր աշխարհաքաղաքական դերակատարների ազդեցությունների ոլորտում: Որպէս նման իրադրության անուղղակի հետեւանք՝ հանրապետությունում ձեւավորվել են քաղաքական եւ փորձագիտական հանրության խմբեր, որոնք հանդիսանում են այս կամ այն աշխարհաքաղաքական ուղղության կողմնակիցները: Իրենց հերթին՝ այդ խմբերի աշխարհաքաղաքական նախապատվություններն անհրաժեշտ հայեցակարգի բացակայության պատճառով վերաճում են քաղաքակրթականի: Նման միտումը հետեւանք է թե՛ վերոհիշյալ խմբերի անդամների անհատական քաղաքական/քաղաքակրթական կողմնորոշումների, թե՛ այդ խմբերի անդամների հետ տարվող «բաց» եւ/կամ «փակ» աշխատանքի, որը վարում են տարբեր աշխարհաքաղաքական դերակատարների ներկայացուցիչները:

❖ Սփյուռքի քաղաքական եւ հասարակական կառույցների ներկայացուցիչները հաճախ հանրությանը ներկայացնում են իրենց քաղաքակրթական նախասիրությունները, որոնք, որպես կանոն, նույնացվում են նրանց բնակության վայրերի հետ: Այս գործընթացում, պետք է ենթադրել, արտաքին ազդեցության հետեւանքով ձեւավորվող գործոնները նույնպես տեղ ունեն:

Եթե «պառակտված քաղաքակրթությունների» վերաբերյալ Հանտինգտոնի կանխատեսումները համարենք արդարացված, ապա վերոհիշյալ տարակարծությունները քաղաքական/քաղաքակրթական կողմնորոշումների ոլորտում պետք է ընկալել որպես լրջագույն մարտահրավեր՝ ուղղված իր պետական կայացման փուլում գտնվող ՀՀ-ին եւ հայությանն ընդհանրապես:

### **Հայաստանը եւ հայությունը՝ ուրույն քաղաքակրթություն**

Հաշվի առնելով գլոբալացման գործընթացների տրամաբանությունը՝ դժվար չէ տեսնել, որ նման հիմնախնդիրների առջեւ այսօր կանգնած է ոչ միայն Հայաստանը, այլեւ մի շարք մեծ եւ փոքր պետություններ (նախկին ԽՍՀՄ-ից՝ Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը եւ Մոլդովան), որոնք քաղաքակրթական կողմնորոշումների առումով հայտնվել են երկընտրանքային իրավիճակում: Նման անբարենպաստ վիճակում դիմակայելու համար պահանջվում են քաղաքակրթական բնույթի բնական ռեսուրսներ, որոնց, ինչպես հայտնի է, բոլորը չէ, որ տիրապետում են: Այս առումով հայության դիրքերն անհամեմատ ավելի շահեկան են: Կան բոլոր հիմքերը պնդելու, որ Հայաստանը եւ հայությունը հանդիսանում են ուրույն, կամ՝ օգտվելով Առնոլդ Թոյնբիի եզրաբանությունից՝ լոկալ քաղաքակրթություն, որին բնորոշ են ինքնատիպ հոգեւոր-մշակութային արժեքներ: Թվարկենք դրանցից մի քանիսը.

❖ Հայերի ծագումնաբանությունը եւ հայոց լեզուն յուրահատուկ տեղ են գրավում հնդեվրոպական ազգերի խմբում:

❖ Քրիստոնեությունն առաջինը ընդունած պետության գաղափարի համատեքստում՝ Հայ եկեղեցին ունի իր ուրույն ուղղվածությունը:

❖ Ինքնատիպ երեւույթ է Մեսրոպյան այբուբենը եւ դրանով պայմանավորված՝ հայկական բազմադարյա գրական ժառանգությունը:

❖ Ուրույնությունը հաստատող բոլոր հատկանիշներն ունի հայկական մշակույթը:

Չավելենք նաեւ, որ հայութիւնն անցել է յուրահատուկ պատմական ուղի՝ կուտակելով նաեւ բազմադարյա քաղաքական մշակույթ եւ այսօր էլ հանդիսանում է ոչ միայն տարածաշրջանային, այլեւ գլոբալ քաղաքականութեան (հաշվի առնելով, մասնավորապէս, Ցեղասպանութեան եւ ԼԴՅ հիմնախնդրին առնչվող հարցերը) սուբյեկտ:

Սակայն մեր ուրույնությունը սոսկ պատմական երեւոյթ չէ, դա նաեւ արմատացած է մեր ժողովրդի գիտակցությունում: Դրա մասին են վկայում, մասնավորապէս, «Գործընկերություն հանուն բաց հասարակութեան» ՀԿ «Հայաստանի երիտասարդութեան վերաբերմունքը եվրոպական արժեքներին եւ Հայաստանի ինտեգրմանը եվրոպային» թեմայով անցկացրած սոցիալաբան արդյունքները: «Ձեր կարծիքով, ո՞ր մշակույթին եւ մտածելակերպին են մոտ հայկական մշակույթը եւ մտածելակերպը» հարցին հարցվողների 70,5%-ը պատասխանել է «Ոչ մեկին, հայկական մշակույթը եւ մենքալիտետը եզակի են»:

Քաղաքական-քաղաքագիտական ընտրանու շրջանակներում այս թեմայի շուրջ կատարվել է ֆոկլորային սոցիալաբան նաեւ «Նորավանք» հիմնադրամի կողմից: Արդյունքները վկայում են, որ հարցվողների գերակշռող մասը նույնպէս համոզված է, որ Հայաստանը եւ հայությունը ուրույն քաղաքակրթութեան կրողներ են հանդիսանում: Ստորեւ ներկայացնում ենք մի քանի բնորոշ պատասխաններ այդ հարցումից:

«Հայաստանը լոկալ քաղաքակրթութեան կրող է. մեր ժողովրդին հատուկ է բաց, ընկալունակ լինելը, տեղայնացնելու կարողությունը. սա մեր ազգի գլխավոր առավելությունն է»: «Հայերի պատմական առաքելությունը քաղաքակրթությունների կամրջողի դերակատարությունն է. ավելի կայուն պատվար՝ ընդդէմ գլոբալացման կամ ծայրահեղ մահմեդականութեան հաղթարշավների, քան այս է, թերեւս անհնաստ է փնտրել»: «Արեւմտեան արժեքներից՝ կենտրոնանալ քաղաքական եւ տնտեսական մրցակցութեան վրա՝ միջանձնային հարաբերություններում մնալով պահպանողական. այս է պահանջվում, եւ սա հնարավոր է»: Նման պատասխանների շարքը կարելի է ավելացնել:

Այսպիսով, ՀՀ-ում կարելի է դերակատարում ունեցող սոցիալական խմբերի՝ երիտասարդութեան եւ քաղաքական ընտրանու գերակշռող մասն ընկալում է հայությունը որպէս ուրույն քաղաքակրթություն: Այդ իրողությունը լուրջ նախապայման է, որպէսզի այս թեզը տեղափոխվի ՀՀ քաղաքական դաշտ:

Միեւնույն ժամանակ, համաշխարհային մրցակցային դաշտում հաջողութեան հասնելու համար քաղաքակրթական ուրույնությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Անհրաժեշտ է, որպէսզի այս

կամ այն քաղաքակրթության կրողը կարողանա համապատասխան եւ համարժեք լինել ժամանակակից աշխարհակարգի տրամաբանությանը, տիրապետի ինքնակազմակերպման մեխանիզմներին, կարողանա օգտվել հոգեւոր, մտավոր ու տնտեսական զարգացման համար ընձեռված հնարավորություններից:

**Հայկական քաղաքակրթությունը  
եւ գլոբալացվող աշխարհը**

Հայկական քաղաքակրթությունը՝ լինելով ինքնատիպ, միեւնույն ժամանակ պարունակում է ունիվերսալ բնույթի բաղադրիչներ, որոնց էությունը համահունչ է արդի համամարդկային արժեքներին: Համառոտ թվարկենք դրանցից մի քանիսը.

❖ Հայությանը բնորոշ են քրիստոնեական, մարդասիրական մոտեցումներ, որոնք արտահայտվում են պատմագրությունում, էպոսում, գործարարական եւ ռազմական վարքականոցներում:

❖ Հայությունը ազատության եւ արդարության գաղափարների նկատմամբ մշտապես ունեցել է հատուկ դրական վերաբերմունք, եւ դրա մասնավոր արտահայտությունն է ճորտատիրության բացակայությունը հայ հասարակությունում:

❖ Հայությունում արմատավորված է հարգանքը կնոջ հանդեպ, ինչը փաստում է կնոջ եւ տղամարդու միջեւ խտրականության բացակայության սկզբունքը, որը նույնպես փաստավորում է բազմաթիվ պատմագրական, ազգագրական փաստերով:

Ներկայումս Արեւմուտքը փորձում է ներդնել մեզանում համամարդկային արժեքներ, որոնք, խորքային առումով, մենք վաղուց կրում ենք եւ ներմուծման կարիք չունենք, ու ակնհայտ է, որ հասարակությունը գրեթե անտարբեր է դրսի քարոզչության նկատմամբ: Դա պայմանավորված է ոչ թե այդ արժեքների բովանդակությամբ, այլ այն մեթոդներով, որոնց միջոցով իրականացվում են «ժողովրդավարացման» ամենազանազան նախագծերը: Այդ իրողությունն են արտահայտում, մասնավորապես, «Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի» իրականացրած սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Օրինակ, «Իմաստ չեն տեսնում հակադրել հայկական եւ եվրոպական մշակույթները. մենք հեշտությամբ կարող ենք ինտեգրվել եվրոպային՝ պահպանելով եւ մեր ավանդույթները, եւ մշակութային արժեքները» պնդմանը դրական է պատասխանել հարցվողների 59.4%-ը:

«Քաղաքակրթական արժեքների առումով մենք հարում ենք...» հարցադրմանը հարցվողների 20.6%-ը պատասխանել է «Միանգամայն տարբերվող եւ ինքնատիպ քաղաքակրթություն ենք», իսկ «Բոլորի համադրումն (սինթեզն) ենք»՝ հարցվողների 22.7%-ը: Հարցախույզի նման արդյունքները, փաստորեն, արտահայտում են մեր հանրության մեծամասնության վերաբերմունքը քաղաքակրթական խնդրին. հայությունը ուրույն է եւ պահպանողական ու միեւնույն ժամանակ «բաց» է համաշխարհային զարգացումների համատեքստում: Այս առիթով հարկ է շեշտել, որ նման, իր ձեւի մեջ թվում է թե երկակի, բայց իրականում՝ ամբողջական մոտեցումը բնորոշ է ներկայիս չափանիշներով ամենահաջողակ քաղաքակրթություններին՝ անգլոսաքսոնյանին եւ չինականին:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ ի տարբերություն շատ երկրների ու ազգերի, ՀՀ-ն եւ հայությունն ունեն անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս որակել հայկական քաղաքակրթությունը որպես ուրույն: Միեւնույն ժամանակ, հայությանը խորթ չեն այսօրվա քաղաքական-հասարակական կյանքում գերակայող ընդհանրական սկզբունքները: Նման իրողության ներդրումը եւ «կուլտիվացիան» քաղաքական-հասարակական դաշտում թույլ կտա հայությանը անհամեմատ ավելի արդյունավետ գործել ե՛ւ ՀՀ–Սփյուռք շրջանակներում, ե՛ւ ներկայի քաղաքակրթական բախումների քաղաքական հարթությունում:

**ԹՈՒՐՔ ՄԵՍԽԵԹՅԻՆԵՐԸ՝  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ  
Արտակ Շաքարյան**

*Մեսխեթցիները կամ թուրք մեսխեթցիները թյուրքալեզու մահմեդականներ են, որոնք ավանդաբար բնակվել են Խորհրդային Վրաստանի հարավային շրջանում, որը որոշ աղբյուրներում կոչվում է Մեսխեթ (Սամցխե), ինչից էլ եկել է նրանց անվանումը: 1944թ. մի շարք «անբարեհույս» ժողովուրդների, այդ թվում՝ մեսխեթցի թուրքերի բռնագաղթի արդյունքում 90 000 մեսխեթցիներ տեղափոխվեցին Ուզբեկստան, Ղազախստան եւ Կիրգիզիա:*

*Մեսխեթցիների ճնշող մեծամասնությունն իրեն բնութագրում է որպես թուրք, թեեւ կա մի մաս, որն իրեն համարում է մահմեդական վրացի: Խոսում են թուրքերենի արեւելյան խոսվածքով: Հավատացյալները պատկանում են սուննի ուղղությանը:*

1578թ. տվյալ տարածքն ընկնում է Օսմանյան կայսրության տիրապետության տակ: 1829թ. Ադրիանապոլսի պայմանագրի համաձայն՝ այն մտնում է Ռուսական կայսրության կազմի մեջ: Այդ ժամանակ մահմեդական մեսխեթցիները կազմում էին շրջանի փոքրամասնությունը, սակայն XIX դարի ու XX դարի առաջին 30 տարիների ընթացքում նրանց տեսակարար կշիռն աստիճանաբար աճում է մեկ երրորդից մինչեւ երկու հինգերորդ:

1853-1856թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ մեսխեթցի թուրքերն աջակցություն էին ցուցաբերում օսմանյան բանակին: Պատերազմից հետո մեսխեթցիների մի որոշակի մաս գաղթեց Էրզրում:

1928-37թթ. մեսխեթցի թուրքերը ենթարկվեցին ճնշումների: Մեծ Հայրենական պատերազմի ժամանակ բանակ կանչվեց ավելի քան 40 հազար մարդ, որոնցից 26 հազարը զոհվեց:

Պատերազմական ժամանակ սահմանամերձ բնակչությունը, որը թշնամական տրամադրություններ ունեցող հարեւանի հետ ընդհանուր արմատներ ունի, միշտ կատարում է հինգերորդ շարասյան դեր, ուստի երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1944թ. նոյեմբերի 15-17-ին, Ստալինի հրամանով մեսխեթցի թուրքերը բռնագաղթվեցին Խորհրդային Վրաստանի հարավային ու հարավարեւմտյան շրջաններից Միջին Ասիա ու Ղազախստան: Ընդհանուր առմամբ



բռնագաղթի է ենթարկվել 115 հազ. 500 հոգի, որոնցից մոտ 17 հազարը մահացել են ճանապարհին: Բռնագաղթված թուրք մեսխեթցիները տեղաբաշխվեցին Ուզբեկստանի, Ղազախստանի ու Կիրգիզիայի տարբեր շրջաններում՝ որպես «հատուկ վերաբնակներ»: 1956թ., երբ թուրք մեսխեթցիներից հանվեցին հատուկ վերաբնակության սահմանափակումները, նրանց մի մասն սկսեց վերադառնալ Կովկասի տարբեր շրջաններ: 1950-ական թթ. մեսխեթցի թուրքերի շրջանում զարգանում էր մի շարժում, որը կոչ էր անում վերադառնալ Վրաստան: 1989թ. Ֆերգանայում տեղի ունեցած հայտնի իրադարձություններից հետո ավելի քան 16 հազար մեսխեթցի տարհանվեց Ռուսաստանի միջին գոտի: Մեկուկես տարվա ընթացքում ավելի քան 90 հազար հոգի տեղափոխվեց Ադրբեջան, Զյուլիսային Կովկաս, Ղազախստան, Ուկրաինա:

\* \* \*

Համաձայն պարտավորությունների, որ իր վրա վերցրեց Վրաստանը՝ 1999թ. դառնալով Եվրոպայի խորհրդի անդամ, մեսխեթցի թուրքերը պետք է հայրենադարձվեն մինչև 2016թ.: Այդ ուղղությամբ աշխատանքների համար Վրաստանում ստեղծվեց հանձնաժողով, որը պետք է զբաղվեր անցյալ դարի 40-ական թթ. բռնագաղթված մեսխեթցիների հայրենադարձման հարցերով: Սակայն Թբիլիսիի կողմից հստակ քայլեր դեռ չեն ուրվագծվում:

Վրաստանում այսօր բնակվում է ընդամենը 700 մեսխեթցի: Թուրք մեսխեթցիների համայնքներ կան Ռուսաստանում (շուրջ 70 հազ. հոգի), Ադրբեջանում (շուրջ 95 հազ.), Ուկրաինայում (շուրջ 9 հազ.), Ղազախստանում (շուրջ 150 հազ.), Ուզբեկստանում (շուրջ 30 հազ.), Կիրգիզիայում (շուրջ 50 հազ.), ԱՄՆ-ում (շուրջ 2 հազ.), Թուրքիայում (շուրջ 35 հազ.):

Առավել կարելուր գործոն է Թուրքիայում բնակվող մեսխեթցիների համայնքը, որը բաժանվում է երկու մասի. 1) նրանք, ովքեր գաղթել են Թուրքիա 19-րդ դարավերջից մինչև ստալինյան բռնաճշումների սկիզբը, եւ նրանց սերունդները, 2) ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիա գաղթածները: Առաջին խումբն արդեն ուժացված է, իսկ երկրորդը, որ կազմում է մեծամասնությունը, դեռ առանձնանում է իր հատուկ ինքնության գիտակցմամբ: 1992թ. Թուրքիայում ընդունվեց հատուկ օրենք, որը հեշտացնում էր մեսխեթցիների ներգաղթը երկիր: Հետաքրքիր է, որ Թուրքիա ներգաղթած մեսխեթցիների մեծ մասը կտրականապես դեմ է Վրաստանում վերաբնակվելուն ու համարում է, որ Թուրքիա գալով՝ արդեն վերագտել է բուն հայրենիքը:

Մեսխեթցիների մեծամասնությունը բնակվում է Թուրքիայի

արեւմուտքում գտնվող Բուրսա քաղաքում (շուրջ 20 հազ. հոգի), մնացածը հիմնականում տեղաբաշխված են Հայաստանի ու Վրաստանի սահմանին մերձակա տարածքներում՝ Աղրը, Էրզրում, Իգդիր, Արդահան:

Թուրք մեսիտեթցիներն ունեն մի շարք կազմակերպություններ, որոնք կոչված են պաշտպանել իրենց իրավունքներն ու շահերը, սակայն ակնհայտորեն ֆինանսավորվում են առանձին պետությունների կողմից, որոնք եւ ուղղորդում են դրանք՝ համապատասխան իրենց շահերի:

Ամենից հայտնին ու հզորն է «Վաթան» (թուրքերենից թարգմանաբար «Հայրենիք») կազմակերպությունը, որը հիմնվել է դեռ 1990թ.: «Վաթանի» հիմնական նպատակներն են հասնել 1940-ականների բռնազաղթի անարդարացի լինելու ճանաչմանն ու թուրք մեսիտեթցիների վերաբնակեցմանը բնակության նախկին տարածքներում, մասնավորապես՝ Ախալցխայում: Կազմակերպությունը գտնվում է Անկարայի վերահսկողության ներքո եւ վարում է հիմնականում Թուրքիայի շահերին համապատասխան քաղաքականություն:

Ընդդեմ «Վաթանի» Վրաստանի կառավարությունն ստեղծել էր մեկ այլ կազմակերպություն՝ «Խսնա» (վրացերենից թարգմանաբար «Փրկություն»), որի նպատակների մեջ նույնպես մտնում էր մեսիտեթցիների վերաբնակեցումը Վրաստանում, սակայն նրանք չէին սահմանափակվում միայն Սամցխե-Ջավախեթի շրջանով, այլ կոչ էին անում վերադառնալ ընդհանրապես Վրաստան: Բացի այդ, ի տարբերություն «Վաթանի», որը մեսիտեթցիներին համարում է թուրքեր ու պահանջում է Վրաստան վերադառնալու պարագայում տրամադրել վերջիններիս ազգային փոքրամասնությունների հատուկ իրավունքներ, «Խսնան» մեսիտեթցիներին համարում էր մահմեդականացած վրացիներ ու չէր ճանաչում նրանց որպես ազգային փոքրամասնություն: «Խսնայի» փակումից հետո նրա ժառանգորդը դարձավ Վրացի վերաբնակների միությունը, որը գաղափարապես չի տարբերվում իր նախորդից:

\* \* \*

Մեսիտեթցի թուրքերի գործոնը կարելու է տարածաշրջանում աշխարհաքաղաքական ուժերի շահերի տեսանկյունից: Վրաստանի հարավ-արեւմուտքում նրանց վերաբնակեցման խնդիրն ամենից շատ հետաքրքրում է Թուրքիային: Նախ եւ առաջ, Վրաստանի սահմանին առկա այդ ժողովրդագրական տարրը Անկարային կտա մի խաղաթուղթ, որը կարելի կլինի խաղարկել հարմար պարագայում նկատի ունենալով այն, որ թուրք մեսիտեթցիներն առաջիկա ժամանակաշրջանում լոյսալ կլինեն ավելի շատ Թուրքիային, քան Վրաստանին: Չի կարելի

աչքաթող անել նաեւ այն փաստը, որ ապագա վերաբնակիչներից շատերը Վրաստան են գնալու հենց Թուրքիայից:

Սույն շրջանը կարելու է Թուրքիայի համար առաջին հերթին այն պատճառով, որ ռուսական ռազմակայանների փոխարեն, որոշ տարբերակներում, ծրագրվում է այնտեղ տեղակայել թուրքականները: Բացի այդ, այս տարածքով են անցնում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը, ինչպես նաեւ ծրագրվող Կարս-Թբիլիսի-Բաքու երկաթուղին:

Անկարան հատուկ ուշադրություն է ցուցաբերում տվյալ շրջանում հայերի ստվար թվաքանակին: Թերեւս, միայն այստեղ է, որ քիչ թե շատ համընկնում են Վրաստանի ու Թուրքիայի շահերը. երկու կողմն էլ շահագրգռված է Սանցիսե-Ջավախեթում հայերի ազդեցության նվազեցմամբ: Իրադարձությունների զարգացման սցենարներից մեկի համաձայն՝ շրջանում հայ-թուրքական բախումների սադրանքից հետո արագորեն տեղակայվում են թուրքական ռազմակայաններ՝ «Թուրքիայի ռազմավարական դաշնակից Վրաստանում կարգուկանոնի պահպանման ապահովման համար»:

Սակայն Վրաստանը չի շտապում վերաբնակեցնել թուրք մեսիտեթիներին տվյալ շրջանում: Թբիլիսիի մոտեցումը տարբերվում է նրանով, որ նախ՝ մեսիտեթիները ներկայացվում են որպես մահմեդականացած վրացիներ, ինչով փորձ է արվում վերցնել նրանց Վրաստանի վերահսկողության տակ՝ կանխավ շրջանցելով ազգային փոքրամասնության խնդիրը, որն ապագայում մեծ գլխացավանք է առաջացնելու: Բացի այդ, պաշտոնական Թբիլիսին Թուրքիային սահմանակից տարածքներ վերադառնալու բացառիկ իրավունքներ չի տալիս՝ զգուշանալով հարեւանի հավանական վնասակար ազդեցությունից: Դրա փոխարեն, Վրաստանը փորձում է բնակեցնել մեսիտեթիներին երկրի ողջ տարածքով մեկ՝ թույլ չտալով նրանց կենտրոնացումը մեկ վայրում:

Այս առումով, թերեւս, համընկնում են Երեւանի ու Թբիլիսիի շահերը, սակայն պարզ չէ, թե որքան ժամանակ Վրաստանը կկարողանա դիմադրել Արեւմուտքի ու, մասնավորապես, Թուրքիայի ճնշումներին ու ձգձգել խնդրի հանգուցալուծումը: Հարցը մեծապես կարելուվում է ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից, քանզի, բացի նրանից, որ վտանգվում է ջավախահայության ապագան, Հայաստանի Հանրապետությունը հյուսիսից շրջապատվում է թուրքական տարրով:

## **ԻՐԱՆ–ԱՄՆ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

*Իրանի կողմից հարստացված ուրանի ստացումը, նրա հրաժարումը միջուկային հետազոտությունները դադարեցնելուց եւ ԱՄՆ նոր հայտարարություններն Իրանի միջուկային գործունեությունը կասեցնելու պատրաստակամության մասին՝ իսլամական հանրապետությանը պահում են միջազգային քաղաքական օրակարգի առաջին տեղում:*

Իրանական ուրանի հարստացումը տեղի ունեցավ ոչ արդյունաբերական, այլ լաբորատոր ծավալներով: Այսինքն՝ այն հանդիսացավ ոչ թե միջուկային ռազմական ծրագրի համար բեկումնային նշանակություն ունեցող քայլ, այլ մի իրողություն, որը վկայում է իրանական գիտատեխնիկական մտքի որոշակի առաջընթացի մասին: Միեւնույն ժամանակ, դժվար է ընդունել Իրանի նախագահի կարծիքը իրանական երիտասարդ գիտնականների մասին, թե հենց նրանց ուժերով Իրանը դարձավ միջուկային տերություն. ուրանի հարստացման ողջ շղթան մեծ մասամբ իրականացվեց շնորհիվ պակիստանյան միջուկային ռումբի հայր Ա.Բ. Խամինի գնված տեխնոլոգիաների:

Ինչեւէ, իրանական հարստացված ուրանն արդեն իսկ իրողություն է, եւ այն նշանակալիորեն փոխում է Իրանի դիրքը բանակցային գործընթացում: Առաջին հերթին, այն բավական խոցելի է դարձնում իրանական տեսակետն այն մասին, թե միջուկային տեխնոլոգիաները երկրում զարգանում են զուտ խաղաղ նպատակներով: Սակայն, միեւնույն ժամանակ, հարստացված ուրանն ամրացնում է Իրանի դիրքերը, քանի որ հիմա բանակցություններում խոսք պետք է գնա արդեն գոյություն ունեցող իրողությունների մասին:

Միեւնույն ժամանակ, հարստացնելով ուրանը՝ Իրանը հաղթահարեց որոշակի հոգեբանական շեմ, ստիպելով միջազգային հանրությանը մի տեսակ համակերպվել կատարվածի հետ: Մարտ-ապրիլը դարձան իրանական «սենսացիաների» ամիսներ, որոնք կարելի է անվանել կամքի ստուգման ժամանակահատված: Իրանցիների պատկերացմամբ՝ ԱՄՆ-ը ցույց տվեց, որ պատրաստ չէ իրանական հարցը լուծել ռազմական ճանապարհով: Համապատասխանում է դա իրողությանը թե ոչ՝ հավանաբար գիտի միայն ամերիկյան բարձրաստիճան ղեկավարությունը: Բայց

տեղեկատվական դաշտում տեղ գտած կոչերն ամերիկյան ղեկավարությանը՝ հետ կանգնել Իրանի դեմ ուժի կիրառման սցենարներից այնպիսի մարդկանց կողմից, ինչպիսին են Ջ.Բժեզինսկին եւ Մ.Օլբրայթը, վկայում են այն մասին, որ ամերիկյան ղեկավարության մեջ, իրոք, կա շրջանակ, որը կողմնակից է իրանական խնդրի ռազմական ճանապարհով կարգավորմանը:

Սակայն ամերիկացիների պատրաստակամությունը եւ, միեւնույն ժամանակ, անպատրաստ լինելը իրանական հարցի ռազմական հանգուցալուծմանը միայն առաջին հայացքից կարող են իրարամերժ թվալ: Գործընթացներն ավելի բարդ եւ անկանխատեսելի են:

### **Պատերազմի նախապատրաստում**

Ակնհայտ է, որ Իրանի գոյատեւումը ներկա ձեւով ԱՄՆ-ի համար անընդունելի է: Այսօրվա Իրանը ոչ միայն վտանգում է ամերիկյան շահերը, այլեւ իմաստից եւ շահավետությունից զրկում է Իրաքի գրավումը. հարաբերական տեսանկյունից՝ այս երկրում ավելի ամրապնդվեցին իրանական, քան ամերիկյան դիրքերը: Իրաքն ու Աֆղանստանը, ռազմակայանները Միջին Ասիայում բավական երկար ժամանակ շատ փորձագետների կողմից գիտակցվել են որպես հեռանկարային հենակետեր իրանական հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու համար: Սակայն վերջին շրջանի զարգացումները վկայում են, որ այսօր ավելի շատ հենց Իրանն է ամերիկյան ստրատեգների կողմից գիտակցվում որպես տարածաշրջանում ամերիկյան դիրքերի պահպանման հնարավոր հենակետ: Ամերիկյան ռազմակայանները դուրս են բերվել Ուզբեկստանից, նման ճակատագրի կարող են արժանանալ ամերիկյան ուժերը Կիրգիզիայում, զարգացումներն Իրաքում դժվար թե կարող են այս երկիրը մտցնել ԱՄՆ հնարավոր հենակետերի ցանկի մեջ: Այսօր, այսպես կոչված, «Մեծ Մերձավոր Արեւելքի» տարածքում ԱՄՆ-ը աննախադեպ նահանջ է ապրում:

Իհարկե, խոսք լինել չի կարող այն մասին, թե ԱՄՆ-ը հեռանում է տարածաշրջանից: Պարզ է, որ ԱՄՆ-ը դեռ երկար ժամանակ կմնա ռազմաքաղաքական հիմնական դերակատարը տարածաշրջանում: Սակայն մեծ տարբերություն կա *հիմնական* եւ *քաղաքական* դերակատարության միջեւ, ինչին ձգտում է ամերիկյան քաղաքական գիծը:

Ակնհայտ է, որ ամերիկյան ընթացիկ նահանջը երկար տեւել չի կարող: Եվ այստեղ հենց կարելու է Իրանի հիմնախնդրի լուծումը, որը թույլ կտա ամերիկյան ուժերին վերադասավորվել Աֆղանստան–Իրան–Իրաք

շղթայի երկայնքով: Միեւնույն ժամանակ, սպասվելիք ամերիկյան ներխուժումը Իրան կարող է բավական հարմար առիթ հանդիսանալ Ադրբեջանում եւ Վրաստանում ռազմակայանների տեղակայման համար:

Այսօր իսկ կարելի է ասել, որ առայժմ իրագործվում է այս հնարավոր զարգացման միայն առաջին փուլը, այն է՝ Իրան ներխուժման նախապատրաստում եւ իրանական հարցի ռազմական լուծման հնարավորության լույսի ներքո՝ Ադրբեջանում ռազմակայանների տեղակայում:

### **Պատերազմի իմիտացիա**

Ադրբեջանի նախագահի վերջերս ԱՄՆ կատարած այցից առաջ մի շարք լրատվամիջոցներ տեղեկություն տարածեցին, թե Իրանի անվտանգության խորհրդի քարտուղար Լարիջանին եզիպտական «Ալ-Աիրամ» պարբերականին տված հարցազրույցում ասել է, որ ամերիկյան ներխուժման դեպքում Իրանը կհարվածի Ադրբեջանին եւ Բաքու–Ջեյհան նավթամուղին: Սակայն «Ալ-Աիրամ»-ին տված հարցազրույցին ուղիղ անդրադարձը ցույց տվեց, որ Լարիջանին նման խոսքեր չի արտասանել: Ամերիկյան «Սթրաթֆոր»-ը նույնպես հանդես եկավ վերլուծությամբ, որ ամերիկյան հարձակման եւ Իրան–ԱՄՆ հարաբերությունների հետագա լարման պարագայում Ադրբեջանը եւ Բաքու–Ջեյհանը կարող են դառնալ իրանական հարձակման թիրախ: Վերը նշված ապատեղեկատվությունն ու վերլուծությունը հանրությանը ներկայացվեցին Ադրբեջանում ամերիկյան ռազմակայանների տեղակայման նպատակահարմարության քննարկման համատեքստում:

Այստեղ ուշադրություն պետք է դարձնել նրան, որ իրանական հակահարվածը Բաքու–Ջեյհանին տնտեսական տեսանկյունից այնքան նշանակալի չէ, որքան ներկայացվում է: Բաքու–Ջեյհանն առայժմ նավթ չի տեղափոխում եւ մինչեւ նախագծին Ղազախստանի լիարժեք միացումը կտեղափոխի լավագույն դեպքում տարեկան ոչ ավելի, քան քսան միլիոն տոննա ադրբեջանական նավթ. գլոբալ տեսանկյունից աննշան ծավալ՝ հաշվի առնելով, որ գրեթե սնանկացած եւ մասնատված ՅՈՒԿՕՍ-ի նավթային տարեկան հաշվեկշիռն այս ցուցանիշից երեք անգամ բարձր է:

Վերը նշվածը թույլ է տալիս մատնանշել մի այլ սցենար. Իրանի միջուկային ծրագիրը, նրա հնարավոր հակահարվածները եւ տեղեկատվական դաշտում անհապաղ ներկայացվող ամերիկյան ներխուժումը միայն առիթ են Իրանի հարեւանությամբ ամերիկյան բազաների տեղակայման եւ ամերիկյան, այսպես կոչված, «անվտանգության երաշխիքների» տարածման համար: Այս սցենարի բաղկացուցիչ մաս կարող է

հանդիսանալ նաեւ տեղեկատվական դաշտում տարածվող այն կարծիքը, թե ԱՄՆ-ին անհրաժեշտ է լուծել ղարաբաղյան հիմնախնդիրը, որպեսզի առավելագույնս հարմար իրականացվի հարձակումն Իրանի դեմ. այդպիսով՝ Իրանի նկատմամբ հնարավոր հարձակումն օգտագործվում է Չարավային Կովկասում ամերիկյան դիրքերի ամրապնդման եւ ռազմակայանների տեղակայման համար:

Անշուշտ, պատերազմի նախապատրաստման եւ իմիտացիայի սցենարները կարող են մաս կազմել մեկ ընդհանուր սցենարի եւ հանդիսանալ դրա ընդամենը երկու անքակտելի, սակայն ինքնաբավ փուլերը:

Միաժամանակ, կարելի է ենթադրել, որ ԱՄՆ-ը մինչեւ օրս վերջնական դիրքորոշում չունի այն մասին, թե ինչ ճանապարհով եւ միջոցներով պետք է լուծել իրանական հիմնախնդիրը: Սա թեւեւ բացասական անորոշություն է մտցնում Իրանի շուրջ ընթացող գործընթացներում, բայց միեւնույն ժամանակ դրականորեն մեծացնում է միջազգային դիվանագիտության մասնակցությունն իրանական հիմնախնդրի կարգավորման գործընթացին: Այս առումով, Իրանի հանդեպ ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից առայժմ պատժամիջոցներ չկիրառելը եւ իրանական միջուկային ծրագրի նկատմամբ ԱԷՄԳ ոչ միանշանակ կարծիքը, թերեւս, խոսում են հիմնախնդրի հենց դիվանագիտական կարգավորման հեռանկարի հնարավորության մասին:

## **ԹՈՒՐՔ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

### ***Սարգիս Հարությունյան***

Վերջին տարիներին թուրք-ամերիկյան հարաբերություններում ի հայտ եկած իրողությունները եւ առկա զարգացումները (ի դեպ, նույնը կարելի է ասել նաեւ ամերիկա-սաուդյան հարաբերությունների մասին) սառը պատերազմից հետո եվրասիական ենթատարածաշրջաններում աշխարհառազմավարական տրամաբանությունների փոփոխության ամենացայտուն ցուցիչներից են:

Ռուսաստանի ուղղությամբ Թուրքիան ԱՄՆ-ի համար այլեւս կորցրեց իր նշանակությունը (այդ ուղղությամբ անգամ մեջտեղ եկան հակառակ միտումներ՝ «Երկնագույն հոսք» գազատար, ռազմատեխնիկական համագործակցություն եւ այլն): Մերձավոր Արեւելքում, Բալկաններում ու Հարավային Կովկասում ամերիկյան ռազմաքաղաքական ներկայության աճն էապես կրճատեց Անկարայի նույնիսկ մարտավարական-օպերատիվ նշանակությունը Վաշինգտոնի համար: Այդ հանգամանքը կարճ ժամանակ անց ձեւափոխվեց թուրք-ամերիկյան հակասությունների. տարածաշրջանային նոր ձեւաչափերում Թուրքիայի ներկայության սահմանափակվածությունը կամ բացակայությունն իրականում նշանակում էր թուրքական շահերի անտեսում:

Այսպիսով, փոխվել էր տարածաշրջանի աշխարհաքաղաքական տրամաբանությունը, ինչը ենթադրում է, թե ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության էվոլյուցիան հասել էր մի կետի, որի պայմաններում Անկարայի համար պարզապես վնասաբեր էր Վաշինգտոնի մերձավորարեւելյան նախաձեռնություններին աջակցություն ցույց տալը: 2003թ. ապրիլին թուրքական վերնախավի որոշումը՝ Իրաքի դեմ հարձակման գործում Պենտագոնին Թուրքիայի տարածքի տրամադրումը մերժելու մասին, այդ զարգացումների հետեւանքն էր:

### **Թուրք-ամերիկյան նոր պայմանավորվածություններ**

Այս տարվանից, սակայն, իրավիճակը սկսեց ցույց տալ փոփոխության նշաններ: Իրանական հարցը դարձավ այն պատճառը, որը նպաստեց թուրք-ամերիկյան նոր մերձեցմանը:

Ջուտ ռազմական բնույթի խնդիրներից զատ (ցամաքային եւ



օդային տարածքի տրամադրում, ռազմականացման օգտագործում), իրանական հարցում Վաշինգտոնին անհրաժեշտ է Անկարայի աջակցությունը՝ առաջին հերթին մի շարք պատճառներից ելնելով.

- ❖ Թուրքիան մերձավորարևելյան տերություն է,
- ❖ Թուրքիան մահմեդական երկիր է,
- ❖ Թուրքիան որոշակի ազդեցություն ունի ներիրանական գործընթացներում:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա իրանական հարցում Վաշինգտոնի հետ փոխհամաձայնության հանգեցնելու հիմքում ընկած են խոշոր հաշվով երկու պատճառներ.

❖ Անկարայում եկել են այն համոզման, որ առկա իրավիճակը 2003թ. թուրք-ամերիկյան ճգնաժամից հնարավորինս շահած դուրս գալու լավագույն պահն է, ինչը ենթադրում է նախ՝ Թուրքիայի համար կենսական կարեւորություն ներկայացնող մի շարք հարցերում (քրդեր, Իրաք, Քիրքուկ) Վաշինգտոնից զիջումների կորզում, եւ երկրորդ՝ նման քայլով Անկարան փորձում է ապահովել իր ազդեցությունը «հետկոնֆլիկտային Իրանի» գոյության պարագայում:

❖ Մյուս կողմից՝ Թուրքիային մտահոգում է Իրանի ռազմական աճող ներուժը, ինչն էլ ուղղակի ներկայացված է թուրքական ազգային անվտանգության նոր հայեցակարգում (միջուկային տերություն դարձած Իրանը կարող է ոչ միայն խախտել թուրք-իրանական ռազմաքաղաքական հավասարակշռությունը, այլև մերձավորարևելյան հարթությունում թուրքական ազդեցությունը մեխանիկորեն դարձնել երկրորդական). թուրքական քաղաքականությունը փորձում է օգտագործել իրավիճակը տարածաշրջանային իր մրցակցին էապես թուլացնելու համար:

Գերազանցապես ամերիկյան նախաձեռնությամբ 2005թ. աշնանից կողմերը ձեռնամուխ եղան նոր երկխոսության: Անցած ամիսների ընթացքում Անկարայում էին ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Սթեֆըն Յեդլին, Յետաքնությունների դաշնային բյուրոյի եւ ԿՅՎ տնօրեններ Ռոբերտ Մյուլլերն ու Փորթեր Գոսը, ԱՄՆ Գլխավոր սպայակույտի (ԳՍ) պետ Փիթեր Փեյսը եւ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը:

Թուրքական կողմից Վաշինգտոն այցելեցին թուրքական բանակի ցամաքային ուժերի հրամանատար, գեներալ Յաշար Բույուքանիթը, ով

պետք է այս տարվա օգոստոսին Թուրքիայի ԳՍ պետի պաշտոնում փոխարինի Հիլմի Օզքյոքին, եւ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Յիգիթ Ալփողանը:

Մարտին հայտնի դարձավ, որ ամերիկյան «Lockheed Martin» ընկերության առաջնորդությամբ գործող միջազգային կոնսորցիումի (որը զբաղված է նորագույն՝ հինգերորդ սերնդի «F-35 JSF» ռազմական ինքնաթիռի մշակմամբ ու արտադրությամբ) շրջանակներում Թուրքիայի ռազմարդյունաբերությանն են հատկացվելու \$3.5 մլրդ-ի պատվերներ, ինչն աննախադեպ է տասնամյակներ տեւող թուրք-ամերիկյան ռազմատեխնիկական համագործակցության պատմության մեջ:

Ապրիլին հրապարակ իջավ մի տեղեկություն, ըստ որի՝ Պենտագոնը թուրքական ԳՍ-ի հետ քննարկում է այդ երկրի տարածքում ռազմածովային երեք բազաների հիմնման հարցը՝ Իսկենդերունի մոտ (Միջերկրական ծով, ամերիկյան օդուժի համար նախատեսված «Ինջիրլիք» ռազմակայանի հարեւանությամբ) ու եւս երկուսը Էգեյան ծովի ափերին՝ Ուրլա եւ Իզմիր քաղաքների մոտ:

Եվ վերջապես, ապրիլի վերջը՝ մայիսի սկիզբ ժամանակահատվածում Հյուսիսային Իրաքում քրդական կազմավորումների դեմ թուրքական զինված ուժերի ռազմական, ըստ էության, աննախադեպ գործողությունները միայն եկան փաստելու Վաշինգտոն-Անկարա հարաբերություններում նոր պայմանավորվածությունների կայացման մասին:

### **Թուրք-ամերիկյան հակասություններ**

Այդքանով հանդերձ, թուրք-ամերիկյան հարաբերությունների մի շարք հարցերի կապակցությամբ շարունակում են պահպանվել բավական լուրջ հակասություններ:

Երկար տարիներ Վաշինգտոն-Անկարա փոխգործակցության մեջ եական մշանակություն է ունեցել ռազմատեխնիկական ոլորտը: Սակայն 2003-ից այս կողմ ամերիկյան ընկերություններից ոչ մեկը թուրքական պետությունից չի ստացել որեւիցե խոշոր պատվեր:

Անցած տարի դեկտեմբերին ամերիկյան «Boeing» եւ «Bell Helicopter Textron» ընկերությունները դուրս մնացին թուրքական բանակի համար անցկացվող հարվածային հիսուն ուղղաթիռների արտադրության մրցույթից: Հավանական է, որ նույն ճակատագիրն է սպասվում ամերիկյան մեկ այլ՝ «Sikorsky Aircraft» ընկերությանը, որը մասնակցում է թուրքական բանակի համար տրանսպորտային ուղղաթիռների պատրաստման համար անցկացվող մրցույթին, քանի որ

թուրքական նոր պահանջների համաձայն՝ մրցույթին մասնակցող ընկերությունը պետք է ապահովի իր երկրի կառավարության գրավոր համաձայնությունը տվյալ գործարքը թույլատրելու մասին: Ամերիկյան օրենքները պահանջում են, որպեսզի նախ կնքվի գործարքը, իսկ հետո հարցը քննարկվի Կոնգրեսում:

Ավելի վաղ Անկարան մերժել էր առանց օդաչուի թռչող հետախուզական ինքնաթիռների արտադրության \$183 միլիոնանոց պատվերն իջեցնել ամերիկյան ձեռնարկությանը՝ այն հանձնելով իսրայելական «Israel Aircraft Industries»-ին:

Անգամ «F-35 JSF» ինքնաթիռի հարցում թուրքական կողմը պատրաստվում է որպես այլընտրանք գնել նաև եվրոպական «Eurofighter-2000 Typhoon» ռազմական ինքնաթիռները:

Թուրքիան շարունակում է երդողանի կառավարության օրոք մեկնարկած նոր քաղաքականության վարումը Սիրիայի եւ Պաղեստինի ինքնավարության նկատմամբ: Ուշադրություն է գրավում այն փաստը, որ Թուրքիան դարձավ առաջին ոչ արաբական երկիրը, ուր այցելեց (փետրվարի 17-ին) Պաղեստինի խորհրդարանական ընտրություններում հաղթանակած «Համաս» խմբավորման առաջնորդներից Խալեդ Մաշալը՝ հանդիպում ունենալով Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլահ Գյուլի հետ:

Եվ վերջապես, Պենտագոնի համար միգուցե անսպասելի թուրքական ԳՍ-ն առարկություն հայտնեց Միջերկրական ծովում ԱՄՆ առաջնորդությամբ 2001թ. գործող «Operative Active Endeavour» ծրագրի դեպի Սեւ ծով ընդլայնման վերաբերյալ: Իրականում այդ ծրագրի ընդլայնումը նշանակում է Սեւ ծովում ամերիկյան ռազմածովային ուժերի ներկայության որոշակի հիմնավորում: Ուշագրավ է, որ սեւծովյան ավազանի երկրներից Պենտագոնի այդ նախաձեռնության դեմ են դուրս եկել միայն Թուրքիան ու Ռուսաստանը՝ համարելով, որ ոչսեւծովյան պետության ռազմածովային ուժերի ներկայությունը վնաս է իրենց ազգային անվտանգությանը:

### **Չետելություններ**

2003թ. իրաքյան կամպանիայի առնչությամբ թուրք-ամերիկյան հարաբերություններում սկիզբ առած ճգնաժամն իրականում կրում է խորքային՝ ռազմավարական բնույթ: Անգամ իրանական հարցում Վաշինգտոն-Անկարա պայմանավորվածությունները, ըստ էության, ունեն կարճաժամկետ նշանակություն եւ մի մեծ մասով կարող են

արժեզրկվել «հետկոնֆլիկտային Իրանի» պայմաններում, քանի որ իրանական հարցն իր խորությամբ չունի ռազմավարական այն նշանակությունը, ինչ, օրինակ՝ պայքարն էր ԽՍՀՄ-ի դեմ:

Ըստ ամենայնի, ԱՄՆ-ի կողմից Մեծ Մերձավոր Արեւելքում ստեղծվող տարածաշրջանային նոր ձեւաչափերը չեն ենթադրում թուրքական գերիշխող դերակատարություն՝ այդտեղից էլ հիմնական հակասությունը:

Նման իրողության հիմնական պատճառը տարածաշրջանում ԱՄՆ-ին մրցակից այնպիսի ուժի բացակայությունն է, որը կիմաստավորի թուրք-ամերիկյան ռազմավարական համագործակցությունը (ինչպես տասնամյակներ շարունակ եղել է Ռուսաստանի կտրվածքով): Դեռ ավելին՝ ամերիկյան ռազմական-քաղաքական ներկայության անմիջական հաստատումը Մերձավոր Արեւելքում ու հարակից տարածաշրջանում՝ Բալկաններ, Յարավային Կովկաս, Կենտրոնական Ասիա, զուտ ռազմական տեսանկյունից նվազեցնում է թուրքական գործոնի նշանակությունը, եւ այդ միտումը պետք է որ շարունակվի:

Ի հակակշիռ դրան, Անկարան ձգտում է ամեն գնով դուրս չննալ ընթացող այլընտրանքային զարգացումներից. Եվրամիության, Ռուսաստանի, Իրանի ու արաբական աշխարհի հետ թուրքական փոխգործակցության վերիմաստավորման հիմքում ընկած է նաեւ այդ գործոնը:

Այդ առումով հատկանշական են թուրքական ռազմատեխնիկական կարողությունների զարգացման գործում վերջին տարիներին երեւան եկած նոր միտումները. Անկարան փորձում է առնվազն հավասարակշռել ամերիկյան «ներկայությունը» սեփական բանակում՝ ի հաշիվ ռուսական ու եվրոպական տեխնիկայի:

## **ՄԻԱՑՅԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐ. ՆՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ Գագիկ Տերտերյան**

Մայիսի 1-ին Չիկագոյում նշվեց Աշխատավորության տոնը, որին մասնակցեցին գործադուլ հայտարարած 400.000-ից (համաձայն ոստիկանության տվյալների) մինչև 700.000 (ըստ լրատվամիջոցների) ցուցարարներ: Վերջիններիս մեծամասնությունը կազմում էին իսպանախոս ամերիկացիները՝ լատինոսները (բնորոշ է, որ ներկայումս ԱՄՆ-ում տարածում է գտնում անգլոսաքսերին բնութագրող «անգլոս» արտահայտությունը): Սակայն ցուցարարների մեջ քիչ չեն եղել նաև սլավոնները, սեւամորթները եւ ոչ անգլոսաքսոն այլ ազգերի ներկայացուցիչները: Կատարվածը ԱՄՆ նորագույն պատմությունում չունի իր նախադեպը: Համաձայն Չիկագոյում բնակվող, այդ քաղաքի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Գեորգի Դեռլուզյանի՝ ցույցի մասին տեղեկատվությունը ԱՄՆ գլխավոր լրատվամիջոցներում լայնորեն չի լուսաբանվել եւ չի քննարկվել. այդ բողոքի ակցիան քննարկվել է միայն իսպանախոս ՋԼՄ-ում եւ, այսպես կոչված, «ինտելեկտուալների» համար նախատեսված ամսագրերում. այսինքն՝ ամերիկյան իշխանությունները եւ վերնախավը ձգտում են, որպեսզի լատինոսների հետ կապված խնդիրները լայն հասարակական հնչողություն չստանան: Նշենք նաև, որ մայիսինկյան ցույցը լատինոսների կազմակերպած երկրորդ միջոցառումն էր. համաձայն ռուսաստանյան լրատվամիջոցների, մեկ ամիս առաջ նրանք Չիկագոյում արդեն իսկ կազմակերպել էին բազմահազարանոց երթ:

Հատկանշական է, որ այժմ լատինոսները փորձում են հասնել նրան, որ ամերիկյան հիմնը կատարվի նաև իսպաներեն, եւ ամենուր կազմակերպում են հիմնի իսպանալեզու տարբերակի կատարումները: Այդ առաջարկի դեմ, որը փաստորեն խորհրդանշում է 2-րդ պետական լեզվի ներդրում, կոչո է արտահայտվել նախագահ Բուշը («ամերիկացիները պարտավոր են տիրապետել անգլերենին»):

Իսպանախոս ամերիկացիների հետ կապված զարգացումները ԱՄՆ-ում ընթանում են գրեթե այն սցենարով, որը ժամանակին ներկայացրել է Սենյուել Չանտինգտոնն իր «Ով ենք մենք» աշխատությունում: Համաձայն այդ քաղաքագետի (որն, ի դեպ, եղել է ռազմական հետախուզության աշխատակից եւ մասնակցել Վիետնամի պատերազմին)՝ դարիս

կեսերին լատինոսները կազմելու են մեծամասնություն ԱՄՆ-ում եւ ձգտելու են ստեղծել իրենց առանձին պետությունը՝ մասնատելով Միացյալ Նահանգները: Նկատենք, որ Հանտինգտոնի կողմից օգտագործված ժողովրդագրական տվյալները հիմնված են ամերիկյան մարդահամարային ծառայության հաշվարկների վրա. արդեն այսօր ԱՄՆ-ում էքնիկ փոքրամասնությունների թիվը կազմում է 98 մլն (296 մլն ընդհանուր բնակչությունից), որոնցից 43 մլն-ը լատինոսներ են, 40-ը՝ սեւամորթներ, իսկ 2005-ին ԱՄՆ բնակչության աճի 50%-ը կայացել է եկվոր եւ նորածին լատինոսների շնորհիվ:

Ամերիկյան իշխանություններն ավելի քան լուրջ են ընդունում լատինոսների կողմից իրենց ուղղված մարտահրավերները եւ ձեռնարկել են հետեւյալ գործնական քայլերը.

❖ Ներգաղթողների վերաբերյալ ընդունվել է նոր օրենք, համաձայն որի՝ ԱՄՆ-ում անլեգալ բնակվողները (ոչ լեգալ ներգաղթողների թիվը հասնում է 12 միլիոնի) կարող են դատապարտվել երկարատեւ բանտարկության (բնականաբար, մնան մոտեցումը ծանր հետեւանքներ է ունենալու ոչ միայն լատինոսների, այլեւ մյուսների՝ մասնավորապես հայերի վրա): Նկատենք նաեւ, որ նահանգային եւ մասնավոր նախաձեռնությունների մակարդակով ԱՄՆ-ում վերականգնվում է առանձին ուսուցումը լատինոսների եւ սեւամորթների համար: Հիշենք, որ դաշնային մակարդակով ռասայական խտրականությունն արգելվել էր դեռեւս 60-ականներին՝ սեւամորթների խոշոր անկարգությունների հետեւանքով ստեղծված ճգնաժամից դուրս գալու նպատակով:

❖ Ներկայացուցիչների պալատը կողմ է քվեարկել ԱՄՆ – Մեքսիկա (այս երկրից է մուտք գործում ԱՄՆ ոչ լեգալ իմիգրանտների հիմնական մասը) սահմանի երկայնքով (մոտ 1000-1200 կմ) պատ կառուցելու նախագծին (տեխնիկական միջոցներով հագեցած այդ կառույցի 1կմ-ն արժե մոտ \$1-1.5 մլն): Նախագծի լրջության մասին է վկայում, մասնավորապես, այն փաստը, որ Պենտագոնը սկսել է մշակել հատուկ տիպի անօդաչու ինքնաթիռներ (այսպես կոչված՝ «դրոններ»), որոնք պետք է մշտապես վերահսկեն ամերիկա-մեքսիկական սահմանը:

Անշուշտ, վերոհիշյալ զարգացումներն ունեն իրենց օբյեկտիվ՝ ժողովրդագրական պատճառները: Սակայն տպավորությունն այնպիսին է, որ այդ գործընթացները սկսել են ստանալ նաեւ որոշակի միջազգային նշանակություն եւ արտաքին աջակցություն: Ինչպես հայտնի է, Լատինական Ամերիկայում ձեւավորվում է հակաամերիկյան ուղղվածություն ունեցող երկրների՝ Վենեսուելա, Կուբա, Բոլիվիա, յուրահատուկ

կոալիցիա: Բացառված չէ, որ այդ կոալիցիային միանան նաև այլ լատինաամերիկյան պետություններ. կախված մոտ ապագայում սպասվող ընտրություններից՝ նման ուղի կարող են ընտրել նաև Պերուն եւ Նիկարագուան: Հարավային Ամերիկայում ընթացող զարգացումների համատեքստում ուշադրության արժանի են տնտեսական մեծ առաջընթաց ապրող Բրազիլիայի միջուկային ժրագիրը եւ այդ երկրի «միջուկային տերությունների ակունքի» անդամ դառնալու հավակնությունը: Դժվար է պատկերացնել, որ թվարկված երկրներն իրենց հակաամերիկյան գործունեությունում հաշվի չեն առնում այն մարդկային ռեսուրսները, որոնց իրենք տիրապետում են բուն ԱՄՆ-ում՝ ի դեմս այս կամ այն չափով ազգակից իսպանախոս ամերիկացիների: Հիշենք, որ ժամանակին նման տիպի քաղաքական տեխնոլոգիաներ ԱՄՆ-ի նկատմամբ կիրառում էր Ֆիդել Կաստրոն. ամերիկյան լատինոսները 60-ականներին հաճախ էին կազմակերպում ցույցեր՝ ի պաշտպանություն «Ազատության կղզու»: Այսինքն՝ պետք է կարծել, որ իսպանախոս ամերիկացիների շարժումը ԱՄՆ-ում պետք է որ աջակցվի Հարավային եւ Կենտրոնական Ամերիկայի վերը թվարկված երկրների ղեկավարությունների կողմից:

Վերոհիշյալի համատեքստում պետք նաև հաշվի առնել, որ հարավամերիկյան երկրների հակաամերիկյան գործողություններն իրենց արձագանքն են գտնում Եվրոպայում՝ Իսպանիայում եւ Պորտուգալիայում (ժամանակին Իսպանիան մշտապես սատարում էր կոմունիստական Կուբային միջազգային բոլոր ատյաններում):

Սակայն այսօր ավելի կարելի էր են երկու այլ հանգամանքներ.

❖ Հարավային Ամերիկայում նկատվող հակաամերիկյան միտումները հայտնվել են Չինաստանի եւ Ռուսաստանի ուշադրության կենտրոնում: Առաջինը հսկայական ֆինանսական ներդրումներ է կատարել Վենեսուելայում (ավելի քան \$500 մլն) եւ Կուբայում (մոտ \$500 մլն)՝ հետապնդելով էներգետիկ անվտանգության (Վենեսուելայի պարագայում) եւ զուտ քաղաքական (Կուբայի դեպքում) խնդիրներ: Իսկ Ռուսաստանը, որը ԽՍՀՄ տարիներին այդ աշխարհամասում ուներ բավական մեծ ազդեցություն, փորձում է վերականգնել իր դիրքերը՝ ակտիվորեն զենք վաճառելով այդ երկրներին:

❖ ԱՄՆ – Իսլամական աշխարհի ընթացող հակամարտության համատեքստում՝ հարավամերիկյան երկրների նախաձեռնություններին դրական մոտեցում են սկսել ցուցաբերել Իրանը եւ արաբական աշխարհի մի շարք երկրներ: Կարելի է ասել, որ միմյանցից քաղաքակրթորեն էապես տարբերվող այդ երկրներին միավորում է ԱՄՆ-ից դժգոհությունը եւ

առկա էներգետիկ ռեսուրսները քաղաքական նպատակներով օգտագործելու ցանկությունը: Անշուշտ, այս ամենն առաջացնում է ԱՄՆ դժգոհությունը, որն արտահայտվում է, մասնավորապես, Պետական դեպարտամենտի համապատասխան հայտարարություններում: Սակայն տպավորությունն այնպիսին է, որ չնայած ԱՄՆ ջանքերին՝ քաղաքական մերձեցումը լատինաամերիկյան եւ իսլամական աշխարհի երկրների միջեւ շարունակվում է:

Այսպիսով՝ փաստենք հետեւյալ իրողությունները.

❖ ԱՄՆ-ը, որը նախկինում համարվել է «ժողովուրդների ձուլման կաթսա», դադարել է լինել այդպիսին, ինչը պայմանավորված է այդ տերության մշակութային, քաղաքակրթական ռեսուրսների անբավարար լինելով (այդ մասին ուղղակիորեն վկայում են ամերիկյան իշխանությունների կողմից կիրառվող զուտ վարչարարական մեթոդները՝ ներգաղթողների դեմ ուղղված օրենքը եւ Մեքսիկայի սահմանին կառուցվող պատը): ԱՄՆ-ում բնակվող ազգերը՝ հատկապես լատինոսները, ձգտում են ձեւավորել պայմաններ, որոնք թույլ կտան նրանց պահպանել իրենց ազգային ինքնությունը: Նկատենք, որ իսպանախոս ամերիկացիների շարժումը, ի տարբերություն սեւամորթների, տիրապետում է լուրջ ռեսուրսների եւ ազգային-մշակութային, եւ արտաքին քաղաքականության հարթություններում (հաշվի առնելով նրանց համերաշխությունը Հարավային Ամերիկայի եւ եվրոպական որոշ երկրների ժողովուրդների հետ): Այսպիսով, լատինոսների խնդիրն աստիճանաբար վերաճում է ԱՄՆ-ի համար լուրջ ներքին հիմնախնդրի, որի հստակ լուծումներն առայժմ չեն նշմարվում:

❖ Հարավային եւ Կենտրոնական Ամերիկայի երկրները մշտապես գտնվել են ԱՄՆ վերահսկողության տակ (դեռեւս 19-րդ դարում ընդունված ԱՄՆ առաջին քաղաքական հայեցակարգը Մոնրոյի դոկտրինն էր, համաձայն որի՝ Լատինական Ամերիկան հռչակվում էր ԱՄՆ մենատիրական ազդեցության գոտի): Ներկայումս ԱՄՆ գլխավորապես ուժային միջոցների վրա հիմնված քաղաքականությունը հանգեցրել է նրան, որ Հարավային Ամերիկայում ձեւավորվում է հակամերիկյան ուղղվածություն ունեցող երկրների մի ամբողջ համախումբ: Այդ երկրները ստանում են համակարգված աջակցություն ԱՄՆ քաղաքականությունից դժգոհ այլ երկրներից՝ Չինաստանից, Ռուսաստանից, Իրանից եւ արաբական որոշ երկրներից:

❖ Վերոնշյալ խնդիրների տեսակարար կշիռն ամերիկյան ներքին եւ արտաքին քաղաքականությունում գուցե եւ այնքան էլ մեծ չէ: Սակայն դրանք գումարվում են ԱՄՆ հայտնի հիմնախնդիրներին



Մերձավոր եւ Միջին Արեւելքում, Ռուսաստանում, Կենտրոնական եւ Հարավարեւելյան Ասիայում ու մասամբ Եվրոպայում: Տպավորությունն այնպիսին է, որ ԱՄՆ-ը արդեն չի կարողանում արդյունավետ վերահսկել գործընթացները ողջ աշխարհով մեկ: ԱՄՆ-ը դադարել է լինել միակ գլոբալ գերտերությունը, եւ տեղեկատվական հոսքերից ձեւավորվող ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ այս իրողությունը սկսել է ընկալվել թե՛ ամերիկյան, թե՛ այլ երկրների քաղաքական ղեկավարությունների կողմից:

Միեւնույն ժամանակ, վերոհիշյալ հանգամանքները պարունակում են նաեւ որոշակի պատմական եւ աշխարհայացքային տարրեր: Գլոբալ քաղաքական հարթությունում ձեւավորվում է մի իրավիճակ, երբ անգլոսաքսոնյան գաղափարախոսական-քաղաքակրթական մոդելը հակամարտության մեջ է մտնում մնացյալ աշխարհի գրեթե բոլոր հիմնական քաղաքակրթությունների հետ՝ իսլամական աշխարհի, սլավոնական ուղղափառ քաղաքակրթության, չինական համակարգի, իսկ այժմ էլ՝ լատինական քաղաքակրթության հետ:

Նկատենք, որ այս վերջինի հետ հակամարտությունը սկսվել էր դեռեւս 16-17-րդ դարերում եւ ավարտվել անգլոսաքսերի անվիճելի հաղթանակով: Հակամարտությունը կարծես թե նորից թեժանալու միտում ունի, սակայն անգլոսաքսերի հաղթանակն այսօր դժվար է միանշանակ կանխատեսել: Նախկինում, ինչպես եւ այսօր, անգլոսաքսերը գերազանցում էին իսպանախոսներին հիմնականում տեխնոլոգիական ոլորտում (տնտեսական եւ ռազմածովային բնագավառներում, արդյունաբերության մակարդակով, մերքին սոցիալական դաշտում եւ քաղաքական-դիվանագիտական, հետախուզական հարցերում): Ներկայումս նույնպես լատինական երկրները տեխնոլոգիապես զգալիորեն զիջում են ԱՄՆ-ին եւ Մեծ Բրիտանիային (բավական է հիշել Ֆոլկլենդյան կղզիների համար պատերազմը): Սակայն նախկինում անգլոսաքսերը կարողանում էին ավելի համակողմանի ռազմավարություն վարել, եւ նրանց հարաբերություններն այլոց հետ չունեին հակասությունների այն աստիճանը, ինչ բնորոշ է ներկա ժամանակներին: Ներկայումս «մնացյալ աշխարհի» մի զգալի մասը համերաշխ է լատինական աշխարհի հետ: Այս վերջին հանգամանքը կարելու դերակատարում կարող է ունենալ ապագայի զարգացումներում:

**ԱՐԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՐ  
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓԱԿՈՒՂՈՒՄ  
Դավիթ Հովհաննիսյան**

Միջազգային ահաբեկչության դեմ պատերազմը, որ հայտարարվեց Միացյալ Նահանգների կողմից 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո, դարձել է բազում հիմնահարցերի աղբյուր: Ողջ աշխարհով մեկ հասարակական կարծիքը քննադատության կրակի տակ է առել այս պատերազմի իմաստի, գաղափարական հիմնավորման, վարման ձեւի, նպատակի եւ դրանց հետ կապված խնդիրները: Այդ տեսակետներին երկրորդում են փորձագետների եւ վերլուծաբանների գնահատականները:

Ըստ ամենայնի, մյուս քննադատական վերաբերմունք է ձեւավորվում նաեւ ամերիկյան վարչակազմի ներսում: Համենայն դեպս, վերջին շրջանում շատ են այս թեմային նվիրված տարբեր պաշտոնատար անձանց կողմից հրապարակվող հոդվածները, հարցազրույցները եւ ելույթները: Վերջերս կատարվել են նաեւ բազմաթիվ տեղաշարժեր եւ փոփոխություններ ահաբեկչության դեմ գործող հիմնարկների եւ կազմակերպությունների ղեկավար կազմում: Մասնավորապես, բոլորովին վերջերս նախագահ Ջ.Բուշը ռազմական հետախուզության գեներալ-գնդապետ Մայքլ Հեյդենին, որը 2005 թվականից զբաղեցնում էր ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրեն Ջոն Նեգրոպոնտեի տեղակալի պաշտոնը, նշանակեց Կենտրոնական հետախուզական վարչության տնօրեն: Նա փոխարինեց այդ պաշտոնում Փորթեր Գոսին, որին «խնդրել» էին ազատել այն:

Գեներալ-գնդապետ Մ.Հեյդենը 1999թ.՝ մինչեւ Նեգրոպոնտեի տեղակալ նշանակվելն աշխատում էր որպես Ազգային անվտանգության գործակալության տնօրեն, իսկ մինչ այդ ռազմական հետախուզության համակարգում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, որոնք կապված են եղել հիմնական եվրոպական երկրներում այս համակարգի գործունեության հետ:

Հատկանշական են այն դրույթները, որոնցով հանդես է եկել Մ.Հեյդենը՝ պատրաստվելով ԱՄՆ Սենատում իր թեկնածության քննարկմանը: Նրա կարծիքով՝ «արմատական ջիհադականներին հակազդելու համար անհրաժեշտ են երկարաժամկետ, համաձայնեցված եւ բազմա-

բնույթ ու բազմամպատակ ջանքեր, որոնք պետք է շատ ավելի լայն բնույթ ունենան, քան այն, ինչ արվում է ներկայումս, օրինակ՝ ահաբեկիչների առաջնորդների ձերբակալմանն ու ոչնչացմանն ուղղված գործողությունները:

Թվում է, թե այս միտքը դառնում է հիմնականը ոչ միայն հետախուզական եւ ռազմական գործողությունների ծրագրման ոլորտում: Իրենց առաջադրած համաշխարհային նպատակներին հասնելու համար ամերիկյան իշխանությունները փորձում են նոր գաղափարական հիմքեր գտնել, որոնցից ելնելով՝ վերակազմակերպել գործող հզոր քարոզչական համակարգը:

Բանն այն է, որ, ըստ ամերիկյան մասնագետների գնահատականների, հենց այս՝ քարոզչական ոլորտում են ամերիկացիները կրում իրենց համար շատ անսպասելի պարտություններ, որոնց ուղղակի հետեւանքն են ամբողջ աշխարհում արագորեն աճող եւ բուռն կերպով արտահայտվող հակամերիկյան տրամադրությունները:

Չարկ է նշել, որ հակամերիկյանիզմն այսօր առկա է ոչ միայն իսլամական աշխարհում, այլեւ Միացյալ Նահանգների դաշնակից երկրներում եւ նույնիսկ՝ «նոր Եվրոպայում»: Այն արտահայտվում է ոչ միայն ահաբեկչական գործողությունների տեսքով, այլ նաեւ տարբեր պետությունների քաղաքներում տեղի ունեցող բազմաթիվ բողոքի ցույցերով, ԱՄՆ նախագահին ուղղված միլիոնավոր մարդկանց կողմից ստորագրված «բաց նամակներով», Միացյալ Նահանգներում արտադրված ապրանքների բոյկոտով եւ նման այլ միջոցներով: Իրավիճակն ավելի է բարդացնում այն, որ ահաբեկչական գործողություններ իրականացվեցին նաեւ ԱՄՆ Եվրոպական մի քանի դաշնակից երկրներում՝ Իսպանիայում, Մեծ Բրիտանիայում, իսկ մի շարք պետություններում տեղի ունեցան մուսուլմանական երիտասարդության զանգվածային անկարգություններ, որոնց համար հասարակական կարծիքը մեղադրում է հիմնականում ամերիկյան քաղաքականությանը, որի հետեւանքով շիկացել են միջէթնիկական եւ միջկրոնական հարաբերությունները:

Չատկանշական է այս առումով ԱՄՆ արդարադատության նախարար Ալբերտո Գոնսալեսի ելույթ-դիմումը, որն ուղղված էր իր եվրոպական գործընկերներին՝ մայիսի սկզբին Ավստրիայի մայրաքաղաքում կայացած Եվրամիության անդամ երկրների ներքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ:

Ա.Գոնսալեսն ասաց. «Մենք դիմում ենք այսօր Եվրոպական Միությանը եւ այստեղ հավաքված երկրներին՝ օգնություն եւ օժանդակություն ստանալու համար: Մենք դիմում ենք ձեր փորձին, ուսումնասիրում ենք

այն, ինչ անում եք դուք, քանի որ ձեր քաղաքացիներն ահաբեկչությունից տառապում են շատ ավելի վաղուց, քան Միացյալ Նահանգները»:

Ըստ նրա՝ եվրոպական դատական համակարգն ավելի մեծ հնարավորություններ է տալիս ահաբեկիչների դեմ պայքարելու համար (եվրոպացիները շարունակում են դիտարկել ահաբեկչությունը որպես քրեական բնույթ ունեցող հիմնահարց, այլ ոչ թե ռազմական, ինչպես անում է Միացյալ Նահանգները սեպտեմբերի 11-ից հետո), եւ կիրառվող բազմաթիվ միջոցներ, որոնք եվրոպայում վաղուց ի վեր ընդունված են, ամերիկյան հասարակության կողմից գնահատվում են որպես ազատության եւ մարդու իրավունքների սահմանափակում:

Հասկանալի է, որ ամերիկյան նախարարի նման ելույթը երկու նպատակ էր հետապնդում.

ա) մեղմել ամերիկյան հետախուզական ինքնաթիռների չարտոնված թռիչքներից եւ մի շարք եվրոպական երկրներում գաղտնի բանտեր ունենալու մասին տեղեկություններից ստեղծված ծայրահեղ բացասական տպավորությունը,

բ) համոզել եվրոպական դաշնակիցներին ավելի սերտորեն համագործակցել ԱՄՆ համապատասխան հիմնարկությունների հետ՝ նույնիսկ, եթե ահաբեկչության իրավական ըմբռնումն ամբողջովին հակառակ է ամերիկյանին:

Փաստորեն, Ա.Գոնսալեսն ընդունում է, որ եվրոպայի խիստ բացասական արձագանքը ԱՄՆ-ի կողմից ռազմական միջոցների կիրառման վերաբերյալ՝ արդարացի է, սակայն, չնայած դրան, ըստ նրա՝ ընդհանուր նպատակին հասնելու համար անհրաժեշտ է միասնական դիրքորոշումներ ձեւավորել ահաբեկչության դեմ պայքարի հարցում:

Ամերիկյան վերլուծաբանները համարում են, որ այս ամենի հիմնական պատճառն այն է, որ Միացյալ Նահանգներն իր շահերի հետապնդման սխալ գաղափարական հիմնավորումներ է ընտրել, որոնց անմիջական արդյունքն է «Արեւելք-Արեւմուտք» հակադրությունը, որը վեր է աճում հակամարտության՝ առաջ բերելով համատարած հակաամերիկյան տրամադրություններ:

Սակայն նույնիսկ այս սխալ գաղափարական հիմքերի քարոզչական ներկայացման ձեւերը պարզունակ են եւ ուղղված են սխալ նշանակետերի, ինչը պատճառ է դարձել այդ քարոզչության՝ սպասվածին հակառակ արդյունքներ ստանալուն:

Ներկայումս, համաձայն որոշ մասնագետների՝ ամերիկյան քարոզչական մեքենայի հիմնական խնդիրը պետք է լինի ամբողջ ներուժը եւ հնարավորություններն ուղղել մուսուլմանների գիտակցության մեջ

ահաբեկչությունն իրենց հավատից եւ կրոնից բաժանելուն. միայն ադճանապարհով հնարավոր կլինի կանխել «Մուսուլմանական աշխարհ–Միացյալ Նահանգներ» բախումը: Հարկ է նշել, որ այս երկու ուժերի միջեւ հակասությունների սրումն արդեն իսկ խարխլել է ամերիկյան «միաբեւեռականությունը», որի հետեւանքով վերջին շրջանում հետազոտողները սկսել են գնահատել ձեւավորվող միջազգային համակարգը՝ որպես «բազմաբեւեռ», ինչը նշանակում է ԱՄՆ միանձնյա գերազանցության ավարտը:

Հարկ է նշել, որ ամերիկյան քարոզչությունը մինչեւ այդ էլ փորձում էր անջատել «լավ իսլամը», «հարյուր միլիոն մարդկանց կրոնը» ահաբեկիչներից ու ծայրահեղականներից, սակայն դա նրան բացարձակապես չի հաջողվել, քանի որ այդ քարոզչությունը ձեւավորվել է PR-ի եւ գովազդային տեխնոլոգիաների մասնագետների կողմից, որոնք պատկերացում անգամ չեն ունեցել, թե ինչ բան է իսլամը, կա, արդյոք, «մուսուլմանական աշխարհ», ովքեր են մուջահիդները կամ իսլամի բազմաթիվ ճյուղերը ինչ հակասություններ եւ ինչ նմանություններ ունեն: Չհասկանալով, թե ինչ իմաստ է պարունակում «ջիհադ» հասկացությունը, նրանք հորինել են մի նոր եզր՝ «գլոբալ ջիհադ», որը հավատացյալ մուսուլմանի համար անհեթեթություն է: Այս եւ նման բազմաթիվ սխալները, ինչպես նաեւ ճիշտ հասցեատեր չգտնելն ավելի են մեծացնում առանց այդ էլ հսկայական անվստահությունը ամերիկացիների նկատմամբ:

Ամենայն հավանականությամբ, ԱՄՆ-ում ներկայումս սկսել է ակտիվորեն ծավալվել քարոզչական համակարգի ինտելեկտուալացմանն ուղղված դժվարին աշխատանքը: Թվում է, թե այս ուղղությունը, Միացյալ Նահանգների շահերի տեսանկյունից, ճիշտ է ընտրվել, սակայն արդյո՞ք այն չի ուշացել:

Մեր կարծիքով՝ այս ոլորտի ինտելեկտուալացումը հակասում է նաեւ ամերիկյան վարչակազմի հիմնական սատարող ուժերի՝ ռազմարդյունաբերական եւ էներգետիկ համալիրներ, Պենտագոն, շահերին, ուստի նրանք կաշխատեն խոչընդոտել դրան:

Մյուս կողմից՝ մոտենում են Կոնգրեսի ընտրությունները եւ նախագահի թեկնածուների նախընտրական քարոզչության տարին, եւ հանրապետականներին անհրաժեշտ են շոշափելի արդյունքներ, ուստի ահաբեկչության դեմ պայքարի քաղաքականության փոփոխությունները կարող են օժանդակություն ստանալ:

Ամերիկյան հասարակագիտական եւ փիլիսոփայական միտքը մտահոգ է ամերիկյան հասարակության մեջ առկա մի քանի, իրենց

տեսակետից, վտանգավոր միտումներով, որոնք նույնպես նպաստում են հակաամերիկանիզմի արմատականացմանը: Դրանցից մեկն այն է, որ շարքային ամերիկացիները կորցնում են իրենց հասարակական ակտիվությունը եւ չափազանց հոռետեսորեն են տրամադրված իրենց՝ պետության քաղաքականության վրա ազդելու հնարավորությունների նկատմամբ: Այս առումով, որպես ծայրահեղ վտանգավոր է գնահատվում վերջին շրջանում հաճախ վկայակոչվող այն փաստը, որ թեեւ 1960թ. ԱՄՆ բնակչությունը 100 միլիոնով պակաս էր, քան 2000թ., սակայն 1960-ին ԱՄՆ նախագահի թեկնածուների հեռուստատեսային բանավեճը դիտել է թվով ավելի շատ մարդ, քան 2000-ին:

Նման հասարակական պասիվությունը հանգեցնում է բազմաթիվ բացասական հետեւանքների, որոնցից, հավանաբար, ամենավտանգավորն այն է, որ ռազմարդյունաբերական եւ էներգետիկ համալիրները, միավորվելով գիևվորականության հետ, այժմ շատ ավելի հեշտ են հասնում իրենց նպատակների իրականացմանը, քան նախկինում:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Միացյալ Նահանգների վարչակազմի խիստ ուշացած ջանքերը՝ իր վարած արտաքին քաղաքականության, մասնավորապես՝ գլոբալ ահաբեկչության դեմ պայքարի նկատմամբ միջազգային օժանդակության հասնելու համար, դժվար թե պսակվեն հաջողությամբ: Միաժամանակ, հակաամերիկանիզմի աճն ամբողջ աշխարհում շարունակվելու է, ինչը կարող է էլ ավելի շիկացնել իրավիճակն առկա կոնֆլիկտային գոտիներում եւ ստեղծել հակամարտությունների նոր օջախներ:

**ՆՈՐ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
Վահագն Ագլյան**

2006թ. հունվարի 31-ին Համաշխարհային բանկը հրապարակեց «Ապաստերտաճումից դեպի սերտաճում. Արևելյան Եվրոպան եւ նախկին Խորհրդային Միությունը միջազգային առևտրում» զեկույցը: Փաստաթղթի հեղինակների հիմնական եզրահանգումն այն է, որ ներկա դրությամբ եվրոպական մայրցամաքը կանգնած է առևտրատնտեսական երկու ինտրա(վեր)տարածաշրջանային բլոկների բաժանման վտանգի առջև, ինչը կարող է հարատևել բնույթ ստանալ երկարաժամկետ հեռանկարում: Ըստ Համաշխարհային բանկի վերլուծաբանների՝ «մի բլոկի երկրները միտված են ամրապնդելու եւ ընդլայնելու առևտրային կապերն Արևմտյան Եվրոպայի զարգացած պետությունների հետ՝ ունենալով համեմատաբար ավելի մեծ ազգային շահույթ, մինչդեռ մյուսը զգալիորեն ավելի աղքատ է եւ հակված է վերադառնալու ռուսաստանակենտրոն ազդեցության գոտի»:

Համաշխարհային բանկի կողմից ներկայացված վերոհիշյալ զեկույցի հիմքում ընկած է 1991թ. մինչեւ օրս 27 երկրների արտաքին եւ ներքին առևտրատնտեսական քաղաքականության խոր վիճակագրական վերլուծությունը: Ազդեցիկ այս կազմակերպության մասնագետների գլխավոր կանխադրույթն է. Ռուսաստանի Դաշնության քաղաքականությունը ԱՊՀ երկրների նկատմամբ նպատակ է հետապնդում անշրջելի եւ հարատև դարձնել Եվրոպայի բաժանվածությունը երկու հսկայական տնտեսական գոտիների: Մոսկվայի կողմից որդեգրված ռազմավարության գերնպատակն է, ըստ ՀԲ-ի, իր ազդեցության ներքո գտնվող տնտեսական խմբավորումը վերածել եվրոպական քաղաքական-աշխարհագրական համակարգի ծանրակշիռ եւ «մշտական» գործոնի՝ ամրագրելով դրանով եվրասիական մայրցամաքի երկբևեռությունը: Հատկանշական է, որ զեկույցում բավականաչափ հստակորեն են մատնանշվում այդ գոտիների սահմանագծերը. մի կողմում են ԱՊՀ 12 երկրները, իսկ մյուսում՝ Եվրամիությանը վերջերս միացած արևելաեվրոպական երկրները: Առավել «եվրակենտրոն» երկրների շարքում են Չեխիան, Հունգարիան եւ Սլովենիան: Ռուսաստանի հետ

սերտ եւ բազմապրոֆիլ ինտեգրման ջատագովներն են Բելառուսը, Տաջիկստանը, Ուզբեկստանը եւ Թուրքմենստանը, որոնք «պահպանում են հարաբերականորեն մեկուսացված տնտեսական համակարգեր, հետ են ընկնում արմատական շուկայական բարեփոխումներում, մինչդեռ պետական սեփականության հատվածն անհամաչափորեն մեծ է եւ կրում է փակ, ոչ մրցակցային բնույթ»:

Անշուշտ, գլոբալացման դարաշրջանում ՀԲ ներկայացրած եզրահանգումները չափազանց կատեգորիկ կարող են թվալ: Սակայն խնդիրն այն է, որ վերլուծաբանների ելակետային փաստարկներն ուղղակիորեն հենվում են ռազմավարական կարգի նկատառումների վրա: Ակնհայտ է, որ ներկայիս դինամիկ տեղաշարժերի համատեքստում դժվար է վերջնական սահմանագծերի տրամաբանությամբ առաջնորդվել, սակայն հետխորհրդային տարածքում ինտեգրման գործընթացների տրամաբանության վերափոխելուն միտված ՌԴ ներկա ռազմավարության որոշ ասպեկտներ արժանի են լուրջ ուշադրության:

\* \* \*

Ի տարբերություն նախորդ ժամանակափուլի, հետխորհրդային տարածքում ռուսաստանյան քաղաքականության նոր փաստացի մոտեցումները չափազանց մոտ են, այսպես կոչված, նեոռեալիստական դոկտրինի կանխադրույթներին: Այս իրողության ընդհանուր քաղաքական արտացոլումներից մեկն է՝ նախկին միութենական տարածքի երբեմնի աշխարհաքաղաքական միասնականությունը խորհրդանշող ԱՊՀ *քաղաքական նշանակության* շեշտակի նվազումը: Ուշագրավ են 2006թ. ապրիլին Վ.Պուտինի կողմից հնչեցված որոշ նկատառումներ. «ԱՊՀ պետությունների ժողովուրդները ներկայացնում են *հասարակական-մշակութային ընդհանրություն...* եւ դրանում է նրանց նշանակալի մրցակցային առավելությունը ժամանակակից աշխարհում: Մրցունակության հենքում ընկած են ժամանակակից աշխարհի զարգացման կարեւորագույն գործոնները՝ մշակույթը, գիտությունը եւ կրթությունը»: Ըստ էության, Վ.Պուտինի մեկնաբանությունները փաստում են, որ ռազմավարական երկարաժամկետ հեռանկարում Մոսկվան հակված է ելնել *քաղաքակրթական համանմանության* գործոնի առկայությունից, որը հետագայում կարող է նշանակալի դերակատարություն ունենալ նախկին միութենական տարածքը գլոբալ համադրություններ գրավելու գործընթացում: Ըստ երեւույթին, ռուսաստանյան ղեկավարության հարատեւ ձգտումը «սինքրոնացնել սոցիալ-տնտեսական եւ քաղաքական գործընթացները ԱՊՀ տարածքում» (ՌԴ նախագահի



ուղերձը Դաշնային ժողովին, 2005թ.) միտված են հենց այդ գերնպատակի իրագործմանը: Պատահական չեն նաեւ ՌԴ նախագահի հաստատումները՝ տարածաշրջանում Ռուսաստանի քաղաքակրթական դերի շարունակականության մասին:

Սակայն միջնաժամկետ հեռանկարում Մոսկվան ստիպված է լինելու լուծել բավականաչափ հստակ ռազմավարական հիմնախնդիրներ, որոնք առավել բյուրեղացան վերջերս բացահայտ դարձած ռուսամերիկյան հակասություններում: Մասնավորապես, այս տարվա մայիսին Վիլնյուսում կայացած Բալթյան-սեւեռոյան համաժողովում ԱՄՆ փոխնախագահ Դ.Չեյնիի՝ Ռուսաստանին ուղղված աննախադեպ կոշտ «ուղերձը» կարող է իրոք ազդանշել Եվրոպայում նոր բաժանարար գծերի ստեղծումը: Վրաստանի եւ Ուկրաինայի վճռական դիրքորոշումը՝ դուրս գալ ԱՊՅ կազմից եւ սկսել ՆԱՏՕ-ին անդամակցելու գործընթացը, ինչպես նաեւ բալթյան-սեւեռոյան միասնական ժողովրդավարական ճակատ կազմավորելու մասին մտադրություններն այս նոր աշխարհաքաղաքական իրողության վկայություններն են: Ուշագրավ է, սակայն, այն, որ Ռուսաստանն առայժմ համեմատաբար զուսպ է արձագանքում ամերիկյան քաղաքականության կարծրացմանը ԱՊՅ տարածքում, որի գլխավոր նպատակներից է, ըստ ԱՄՆ պետքարտուղար Զ.Ռայսի, հասնել «Ռուսաստանին հարակից երկրներում ԱՄՆ օրինական շահերի ճանաչմանը Մոսկվայի կողմից»: Կրեմլի պաշտոնյաներն ընդամենը «արձանագրեցին» Դ.Չեյնիի ճառի «բացարձակ չհիմնավորված» լինելու հանգամանքը: Ընդհանրապես՝ տպավորություն է ստեղծվում, թե Վ.Պուտինի վարչակազմը հակված է ընդունելու Եվրասիայում ծավալվող նոր մրցապայքարի կանոնները՝ գործելով հայտնի ամերիկյան ասույթի տրամաբանությամբ՝ «business as usual» (*արտառոց ոչինչ չկա*):

Նախ՝ գերծ մնալով ավելորդ աղմուկից, Մոսկվան բացահայտորեն ձգտում է երկարաժամկետ կառուցվածքային հենքի վրա պահպանել եւ զարգացնել իր ռազմաքաղաքական ներկայությունը դաշնակից պետություններում: Եթե ժամանակին Ռուսաստանին պատկանող ռազմականները կոչված էին առավելապես ազդանշել նախկին ԽՍՀՄ տարածքում (բացառությամբ Մերձբալթիկայի) status quo-ն պաշտպանելու Մոսկվայի վճռականությունը, ապա այժմ՝ ՌԴ արտասահմանյան ռազմական ներկայության վերադասավորման նախագիծը ենթադրում է ռազմական սերտաճման որակապես այլ մակարդակ: Մասնավորապես, 2006թ. փետրվարին հայտարարվեց, որ Բելառուսում (Բարանովիչի) Ռուսաստանը նոր ավիաբազա է ստեղծելու, որի օդային պաշտպա-

նությոնն իրականացնելու է Բելառուսի ՀՕՊ համակարգը: Սուտակա ժամանակներս Ռուսաստանը Բելառուսին կփոխանցի հակաօդային պաշտպանության զենիթահրթիռային С-300 համակարգերի 4 դիվիզիոն, որոնք, իրենց հերթին, կծածկեն հրթիռային հարձակման մասին նախազգուշացնող կայանը, իսկ տեղակայվելիք ռուսաստանյան կործանիչների հետ միասին կապահովեն ՌԴ հակաօդային պաշտպանությունն արեւմտյան ուղղությամբ: Ավելին, չի բացառվում, որ շուտով բելառուսական այդ բազայում կարող են տեղակայվել նաեւ թււավոր հրթիռներով սպառազինված ռազմավարական ռմբակոծիչներ:

Ակնհայտ է, որ Բելառուսի հետ նման ռազմաքաղաքական սերտաճման կարելուրագույն նպատակներից է հակակշռել հզորացող ամերիկյան ներկայությունն Արեւելյան Եվրոպայում եւ որոշակիորեն զսպել ՆԱՏՕ ընդարձակումը դեպի արեւելք: Հասկանալի է, որ «ռուսաստանյան դրոշի» ցուցադրման նախկին մարտավարությանը փոխարինելու է գալիս բավական գործնական նպատակներ հետապնդող ռազմավարություն: Ըստ երեւույթին, նույն համատեքստում է անհրաժեշտ դիտարկել նաեւ ՌԴ պաշտպանության նախարար Ս.Իվանովի՝ Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրից դուրս գալու, ինչպես նաեւ միջին եւ մոտ հեռավորության հրթիռների արտադրության վերսկսման մասին ակնարկները:

Երկրորդ՝ 2003թ. ի վեր, սոցիալ-տնտեսական եւ հումանիտար ոլորտներում ինտեգրման գործընթացները կիրառական դարձնելու նպատակով, հիմնական շեշտը դրվեց մասնագիտացված ենթատարածաշրջանային կազմակերպությունների վրա (ЕвразЭС, ЕЭП), որոնք հիմնականում հետապնդում են «գործիքային»-առարկայական նպատակներ՝ արագացնել եւ ընդլայնել ռուսաստանյան խոշոր կապիտալի կառուցվածքային ներգրավումը մասնակից երկրների տնտեսական համակարգերի մեջ:

Մասնավորապես, սերտաճման ռուսաստանակենտրոն սխեմայի գերակայության մասին են փաստում ռուսաստանյան մակրոտնտեսական ներգրավվածության ուրվագծերն ու ծավալները Կենտրոնական Ասիայի երկրներում: Այսպես, դեռ անցյալ տարվա սեպտեմբերին հայտարարվեց, որ Մոսկվան մշակել է 2005-2007թթ. «Կիրգիզիայում Ռուսաստանի ազդեցությունն ուժեղացնելու հատուկ նախագիծ», որը ենթադրում է ռուսաստանյան PAO «ЕЭС»-ի կողմից երկու հիդրոէլեկտրակայանների կառուցում, որոնք, իրենց հերթին, կապահովեն մեկ այլ ռուսաստանյան հսկայի՝ «Рысал»-ի Կիրգիզիայում գործարկվելիք ալյումինի գործարանի էներգակարիքները: 2006թ. ապրիլին նույն PAO

«ԷՅՇ»-ը հայտարարեց, որ 2009թ. վերջնականապես կավարտվեն Տաջիկստանում Սանգոուզա-1 հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքները (670 մեգավատ հզորությամբ), որը կապահովի ոչ միայն Տաջիկստանի, այլև հարակից Աֆղանստանի էլեկտրաէներգիայի կարիքների մի մասը: Նույն ժամանակ «Դառոմ»-ը համաձայնության եկավ Տաջիկստանի ղեկավարության հետ՝ ստեղծել համատեղ ընկերություն, որը կշահագործի այդ հանրապետության չորս գազային հանքատեղիները: Ապրիլին «Իրա»-ը վերահաստատեց իր պատրաստակամությունը ներդնել մոտ 1 մլրդ ԱՄՆ դոլար՝ Տաջիկստանում Ռոզուլի ՋԷԿ-ի կառուցումն ավարտելու համար: Ոչ պակաս ծավալուն ծրագրեր են իրագործվելու նաև Ուզբեկստանում. ռուսաստանյան «Լյուկոյլ»-ը եւ «Դառոմ»-ը ուզբեկական կողմի հետ արդեն ստորագրել են մոտ 2 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրումներ կատարելու մասին համաձայնագրեր:

Երրորդ՝ վերջին մեկ տարվա ընթացքում Ռուսաստանը զգալիորեն ամրապնդեց միջինասիական պետությունների հետ քաղաքական եւ ռազմատեխնիկական բնագավառում սերտաճման միտումը: Այսպես, Արեւմուտքի հետ հարաբերությունների սրման պայմաններում այս տարվա մարտին Ուզբեկստանի նախագահ Ի.Բարիմովը ստորագրեց երկու կարեւորագույն փաստաթուղթ. Ուզբեկստանի՝ «ԷսթաՅՇ»-ին միանալու մասին որոշումը եւ ռուս-ուզբեկական դաշնակցային հարաբերությունների մասին պայմանագիրը: Վերջին փաստաթուղթը նախատեսում է ՌԴ պատրաստակամությունը՝ միջամտել Ուզբեկստանի ներքին գործերին՝ հնարավոր ճգնաժամային իրավիճակների առաջացման դեպքում: Ավելին, Անդիջանի հայտնի դեպքերի տարելիցին Ի.Բարիմովի մոսկովյան այցելության ընթացքում (2006թ. մայիս), ըստ որոշ աղբյուրների՝ քննարկվել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը Ուզբեկստանի մոտալուտ անդամակցության հարցը, ինչի դիմաց Տաշքենդը ակնկալում է լայնածավալ ռազմատեխնիկական օժանդակություն ստանալ: Դատելով Ռուսաստանի ղեկավարության վերջին քայլերից՝ Մոսկվան նորովի է փորձում վերադառնալ եւ ամրապնդել դիրքերն էներգակիրներով հարուստ այս տարածաշրջանում՝ ներքին կայունության երաշխավորի իր դերակատարությունը վերափոխելով կազմակերպված գերակայության: Ի տարբերություն ԱՊՀ արեւելաեվրոպական պետությունների, որոնց պարագայում ռուսաստանյան էներգակիրներից կախվածության խաղաղթի օգտագործումը, փաստորեն, խարխուլեց տարածաշրջանային ինտեգրման նախագծերը (ԷՅՈ), այստեղ առկա են իրական սերտաճ-

ման հնարավորություններ: Այդ են փաստում նաև «գունավոր» հեղափոխություն վերապրած Կիրգիզիայի հետ հարաբերությունները. 2006թ. փետրվարին համատեղ որոշում ընդունվեց մոտ երկուսուկես անգամ մեծացնել այդ հանրապետությունում տեղակայված ռուսաստանյան Կանտ ավիաբազան:

Չփորձելով մեկուսացնել տարածաշրջանը ձեւավորվող ուժային այլ կենտրոնների հետ համագործակցելուց (առաջին հերթին Շանհայի համագործակցության կազմակերպության շրջանակներում)՝ ՌԴ-ն, այնուամենայնիվ, ձգտում է երկարաժամկետ հեռանկարում ապահովել իր ազդեցության «վերահսկիչ փաթեթը» Կենտրոնական Ասիայում: Ըստ երեւոյթին, ռուսաստանյան վերնախավը համամիտ է ԱՄՆ ազգային հետախուզական խորհրդի «Նախագիծ–2020» զեկույցում առաջ քաշված այն կանխատեսման հետ, թե ժողովրդավարացման հերթական ալիքը կարող է դանդաղել կամ առհասարակ կանգ առնել՝ չհասնելով Կենտրոնական Ասիայի երկրներ:

Այդ դեպքում «բացարձակ ռազմավարական արժեքներ» կդառնան տարածաշրջանում անվտանգության եւ կայունության պահպանման տեխնոլոգիաները/եղանակները եւ էներգակիրների արտահանման ուղիների վերահսկողությունը:

**ԻՍՐԱՅԵԼԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
*Սուրեն Սարյան*

Վերջին ներքաղաքական փոփոխություններից հետո Իսրայելը մտել է արտաքին քաղաքականության առաջնահերթությունների ճշգրտման փուլ, որի դրսեւորումը դարձավ ներկայումս քննարկվող ազգային անվտանգության եւ պաշտպանության ռազմավարության վերանայման հարցը. վերջինս չի փոփոխվել Դավիթ Բեն-Գուրիոնի ժամանակներից ի վեր: Համաձայն այդ նոր տեսության՝ Իսրայելի համար ներկայումս առավել լուրջ սպառնալիք է ներկայացնում ոչ թե արաբական աշխարհը, այլ Իրանը՝ միջուկային զենքի կիրառման հնարավորություններով: Թեեւ կարելի է պաղեստինյան ահաբեկչության դեմ պայքարը, սակայն առաջին անգամ Իսրայելական քաղաքական միտքն ընդունում է, որ այդ ահաբեկչության նկատմամբ վերջնական հաղթանակն անհնար է: Առավելագույնը, ինչն Իսրայելն ունակ է այստեղ անել՝ ահաբեկչության դրսեւորումներն ու վնասները նվազագույնի հասցնելն է:

Վերջին տասնամյակում բոլոր Իսրայելական կառավարությունների քաղաքականության առանցքն այն էր, որ ստեղծվի մի կոմպակտ հրեական պետություն, որն ազատված կլինի ավելորդ բեռից՝ ի դեմս արաբներով բնակեցված տարածքների, որը կլինի կենսունակ ու մարտունակ եւ դրանով կկարողանա դիմագրավել գալիք մեծ տարածաշրջանային բախմանը, որի անխուսափելիության մեջ Իսրայելում գրեթե բոլորը վստահ են՝ հաշվի առնելով Պաղեստինում, Հորդանանում, Սիրիայում եւ Եգիպտոսում իսլամ արմատականների հետզհետե ուժեղացումը, Իրաքում անընդհատ բախումները եւ Իրանի ընդգծված հակաիսրայելական պահվածքը:

Հանրահայտ է, որ Իսրայելի արտաքին քաղաքականության եւ ռազմավարության վրա առաջնահերթ ազդեցություն ունեն ԱՄՆ քաղաքականությունը եւ ներկայությունը տարածաշրջանում: Սակայն ամերիկա-իսրայելական հարաբերություններն առանձին քննարկման թեմա են, ուստի այստեղ կանդորադառնա՞նք տարածաշրջանային այն խնդիրներին, որոնք որոշակիացնում են Իսրայելի արտաքին քաղաքականությունը՝ չմոռանալով, որ այդ բոլոր զարգացումներում ներկա է ամերիկյան գործոնը:

### **Իսրայել – Պաղեստին**

Պաղեստինի նկատմամբ Երուսաղեմը որդեգրել է այս պահին առավել օպտիմալ թվացող մոտեցում: Այն է՝ միակողմանիորեն տարանջատվել, թույլ տալ պաղեստինցիներին անկախանալ, որպեսզի նրանք ապրեն իրենց ուզած ձեւով, թողնել նրանց մեն-մենակ իրենց հոգսերի հետ, ինչի արդյունքում Պաղեստինյան ինքնավարության տարածքում արդեն սկսվել են ներքին բախումները. այս ամենը թույլ կտա ապացուցել, որ ամենեւին էլ իսրայելական օկուպացիան չէր պաղեստինցի արաբների դժբախտությունների պատճառը:

Միաժամանակ, Գազան հետզհետե դառնում է իսլամական ահաբեկչության նոր կայանատեղի: Իսրայելի հետ նորմալ հարաբերությունների կողմնակիցներ այնտեղ այլևս չկան. մի մասը ոչնչացվել է, մի մասը՝ փախել: Արաբ-քրիստոնյաները եւս լքել են Պաղեստինյան ինքնավարության տարածքները: Այժմ Պաղեստինում գործում են մոտ 700 զինված խմբեր: Նման իրավիճակը թույլ կտա Իսրայելին, ժամանակ շահելով, շարունակել ներքին համախմբման ընթացքը եւ զնալ պաղեստինցիների հետ սահմանների միակողմանի հաստատման քայլին:

### **Իսրայել – Իրան**

Իսրայելի հիմնական հոգսն այսօր իրոք դառնում է Իրանը, որն արդեն քսանհինգ տարուց ավելի չի ճանաչում հրեական պետության գոյությունը եւ անգամ գոյության իրավունքը: Հիմա էլ պաշտոնական Թեհրանը սպառնում է ջնջել Իսրայելը քարտեզից, հովանավորում է նաեւ Լիբանանում գործող եւ Իսրայելի սահմաններին անմիջապես վտանգ ներկայացնող «Հիզբալլահ» կազմակերպությանը, ինչպես նաեւ աջակցում է «Համասին»: Հրթիռների եւ միջուկային զենքի հետ միասին՝ Իրանը կարող է դառնալ մեծագույն սպառնալիք Իսրայելի գոյությանը 1948 թվականից ի վեր:

Եթե իրանական ղեկավարությունն իրականացներ իր միջուկային ծրագիրը եւ միաժամանակ չսպառնար Իսրայելին «աշխարհի քարտեզից վերացմամբ», ապա Իսրայելը, թերեւս, կճանաչեր Իրանի միջուկային կարգավիճակը, ինչից հետո հնարավոր կլիներ վերականգնել մինչեւ 1979թ. ունեցած երկկողմ ռազմավարական համագործակցությունը:

Իրոք, այն պայմաններում, երբ Իրանը հավակնում է դառնալ տարածաշրջանային տերություն, ինչի արձանագրման համար անհրաժեշտ է ունենալ միջուկային վառելիք եւ միջուկային ռումբ, որքան էլ

տարօրինակ հնչի, թեհրանին պետք են ոչ թե խնդիրներ Իսրայելի հետ, այլ համագործակցություն: Արաբները միշտ էլ կասկածանքով են վերաբերվել եւ վերաբերվում Իրանին եւ չեն ընդունելու նրան որպես դաշնակից, առավել եւս՝ որպես իսլամական աշխարհի առաջնորդ: Ո՞վ այս իրավիճակում կարող է լինել Իրանի դաշնակիցը, եթե ոչ նաեւ Իսրայելը: Նմանապես, Իսրայելն Իրանի կարիքն ունի՝ որպես տարածաշրջանում իր ամենահզոր հավանական դաշնակցի՝ արաբական աշխարհին զսպելու համար:

Սակայն ներկայումս երկու երկրները նպատակաուղղված գնում են դեպի հակամարտություն: Իրանին սպառնում են Իսրայելի կողմից հնարավոր օդային հարվածներով, Իսրայելին՝ Իրանի կողմից միջուկային հարվածներով:

Երուսաղեմում արդեն եկել են այն եզրահանգման, որ դիվանագիտական միջոցներով կանխել Իրանի վերածումը միջուկային տերության հնարավոր չէ: Իգուր չէ, որ Իսրայելական քաղաքականության վետերան Շիմոն Պերեսը նշել է. «Ահմադինեժադը կարող է արժանանալ Սադամ Զուսեյնի ճակատագրին»: Իր հակաիսրայելական ճարտասանությամբ Իրանի այժմյան նախագահը նպաստեց, որ Իսրայելում վերջնականապես համոզվեն, թե ԻԻՀ-ը պատրաստվում է ոչնչացնել հրեական պետությունը:

Իրոք, Ահմադինեժադի սկանդալային հայտարարություններն Իսրայելի հասցեին արտացոլում են Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը, ինչը հաստատեցին այս երկրի գրեթե բոլոր բարձրաստիճան ղեկավարները՝ ընդհուպ մինչեւ իմամ Խամենեյի:

Շատ էին խոսում, թե գարնանը Իսրայելը պատրաստ կլինի նշանակետային հարվածներ հասցնել Իրանի միջուկային օբյեկտներին, սակայն դա տեղի չունեցավ: Իսրայելը թեեւ ունակ է միայնակ ջախջախել Իրանի ռազմական ենթակառուցվածքները, սակայն քաղաքական տեսանկյունից թեւ Ավիվի համար ամենեւին էլ նպատակահարմար չէ դիմել միակողմանի ռազմական գործողությունների:

Իրանի դեպքում Իսրայելը բախվում է որոշակի երկընտրանքի. ինչպես մղել միջազգային հանրությանը իսլամական հանրապետության դեմ վճռական գործողությունների՝ դրա հետ մեկտեղ չհարուցելով տպավորություն, թե հենց ինքն է հրահրում պատերազմը տարածաշրջանում: Միայնակ Իսրայելը գործել չի կարող եւ Իրան-ԱՄՆ հավանական բախման դեպքում հավանաբար չի էլ մասնակցելու ռազմական գործողությունների, ինչպես դա եղավ իրաքյան պատերազմի ժամանակ, թեեւ օժանդակ օգնություն ամերիկյան օդուժին նա ցույց կտա:

Իրանն էլ չի գնացել եւ դժվար թե գնա ուղղակի բախման Իսրայելի հետ, այլ գերադասում է վարել այդ պատերազմը ուրիշների՝ տվյալ դեպքում «Յեզբալլահի» եւ «Յամասի» զինյալների միջոցով՝ նրանց աջակցելով թե՛ զինական, թե՛ ֆինանսական առումներով:

Դրանով պարզ է, որ քանի դեռ Իրանում իշխում է Խոմեյնիի գաղափարախոսությունը եւ քանի դեռ չափավորականները (կրոնական թե աշխարհիկ) չեն տարել վերջնական հաղթանակ արմատականների նկատմամբ, Իսրայելի հետ որեւէ նորմալ հարաբերության մասին խոսք գնալ չի կարող, եւ իրանա-իսրայելական հակամարտությունը մնալու է տարածաշրջանային օրակարգի թիվ մեկ խնդիրը:

### **Իսրայել – Թուրքիա**

Հայտնի է, որ արաբական աշխարհի եւ Իրանի հետ հակամարտության համատեքստում միշտ առանձնացել են հրեական պետության հարաբերությունները Թուրքիայի հետ: Իսրայելը մշտապես աջակցում էր Թուրքիային գրեթե բոլոր տարածաշրջանային հարցերում: Սակայն մեծ հաշվով այդ դաշինքը կրում էր ժամանակավոր՝ հակաարաբական բնույթ՝ պայմանավորված երկու երկրների՝ ԱՄՆ դաշնակիցներ լինելու հանգամանքով, ինչպես նաեւ Իրանի եւ Սիրիայի տարածաշրջանային հավակնությունները զսպելու ընդհանուր ձգտմամբ: Բացի այդ, չունենալով տարածաշրջանում այլ դաշնակիցներ՝ Իսրայելը ստիպված էր հենվել Թուրքիայի վրա:

Սակայն երբ իրաքյան պատերազմի հետեւանքով Սիրիան, Թուրքիան եւ Իրանը, փաստորեն, հայտնվեցին քրդական պետության ստեղծման վտանգի առաջ, այս երեք երկրների շահերը համընկան՝ սեփական տարածքում քրդական անջատողականության կանխման տեսանկյունից: Դա էլ բերեց նրանց միջեւ հարաբերությունների որոշակի մերձեցմանը եւ անգամ ռազմական համագործակցության մասին համաձայնությունների կնքմանը: Թուրքիան գիտակցում է, որ դիմակայել քրդական գործոնին, որն անսպասելիորեն ստացել է իր երբեմնի դաշնակիցներ ԱՄՆ-ի եւ Իսրայելի աջակցությունը, կարող է միայն Իրանի եւ Սիրիայի հետ համագործակցելով:

Մինչդեռ Իսրայելում քրդերի վերաբերյալ այլ մոտեցում է իշխում: Ի դեմս նրանց՝ Երուսաղեմում տեսնում են արաբներին եւ Իրանին էապես թուլացնող մի լծակ: Փորձագետները նշում են, որ քրդերի հետ Իսրայելի կապերը կրում են բավական հին պատմություն, եւ այդ պատմությունն այսօր օգտագործվում է իրաքյան Քրդստանում իսրայելական ներկա-



յության ամրապնդման համար: Այսպես, օրինակ, Իսրայելում վերհիշել են Միջազգետքում հրեաների, այդ թվում՝ քրդական հրեաների արմատների մասին: Որոշ հետազոտություններով հաստատվում է անգամ գենետիկ կապը հրեաների եւ քրդերի միջեւ՝ որպես ժողովուրդների, որոնց ծագման բնօրրանը հենց Միջազգետքն է:

Կարելի է հիշատակել նաեւ իսրայելական հետախուզության շփումները իրաքյան քրդերի հետ, որոնք հաստատվել են դեռեւս անցյալ դարի 50-70-ական թվականներին: Իսրայելական մանուլը հաղորդում է նաեւ քուրդ զինյալներին իսրայելցի զինվորականների կողմից վարժեցման, սպառազինությունների մատակարարման, քրդական ինքնավարության քաղաքների ենթակառուցվածքների արդիականացման մասին: Ընդ որում՝ բոլոր իսրայելցի մասնագետները գտնվում են այնտեղ «մասնավոր» հիմքով:

Ինչպես հայտնի է, թուրք-իսրայելական համագործակցությանն էապես զարկ տվեց 1996թ. Թուրքիայի եւ Իսրայելի կառավարությունների միջեւ ստորագրված ռազմական համագործակցության մասին համաձայնագիրը: Սակայն ներկայումս Թուրքիան չի ցանկանում Իսրայելի պատճառով խնդիրներ ստեղծել իր անմիջական հարեւանների հետ, թեւ Իսրայելը շարունակում է մի քանի հարյուր միլիոն դոլարների հասնող սպառազինությունների եւ զինտեխնիկայի մատակարարման գործարքներ իրականացնել Թուրքիայի հետ: Ձուտ առեւտրի բնագավառում երկու երկրների միջեւ շրջանառությունը կազմում է 2 մլրդ դոլար: Ավելին, ծրագրեր կան Բաքու–Ջեյհան նավթամուղով հոսող կասպյան նավթը եւ «Երկնագույն հոսք» գազամուղով հոսող ռուսական գազը հասցնել թուրքական ափերից Իսրայել, ընդ որում Ադրբեյջանի եւ Ռուսաստանի հետ համաձայնեցված:

Բայց երբ Թուրքիայի ԱԳ նախարարը կոչ է անում ամերիկյան վարչակազմին «չխրախուսել նրանց, ովքեր մղում են Միացյալ Նահանգներին Սիրիայի եւ Իրանի նկատմամբ ուժային տարբերակների կիրառմանը», ապա պարզ է, որ այդպիսի հայտարարություններն ուղղված են Իսրայելի հասցեին: Թուրքիայի վարչապետը մեկ անգամ չէ, որ մեղադրել է Իսրայելի կառավարությանը «պաղեստինցի ժողովրդի դեմ ահաբեկչության մեթոդների կիրառման» մեջ: Դեռեւս 2004թ. ապրիլին Էրդողանի կառավարությունը որոշում է կայացրել վերանայել Իսրայելի հետ հարաբերությունների ամբողջ համալիրը՝ դրանց հետզհետե սառեցման ուղղությամբ: Ավելին, այդ ուղեգիծը համընկավ դեպի ԵՄ Թուրքիայի քաղաքականության թեքման եւ ԱՄՆ-ից որոշակի «հեռացման» ժամանակահատվածի հետ:

Ինչպես նշել է նախկինում մի բարձաստիճան իսրայելցի դիվանագետ, «Թուրքիան այսօր դեռ շարունակում է Իսրայելը դիտել որպես կարելոր եւ հզոր պետություն, սակայն ոչ որպես տարածաշրջանում իր դաշնակից»:

Թուրք-իսրայելական հարաբերություններում ընթացող փոփոխությունները պայմանավորված են նաեւ Թուրքիայի աշխարհաքաղաքական դերակատարման փոխակերպմամբ: Անկարայի դեպի ԵՄ կողմնորոշված արտաքին քաղաքականությունը ստիպում է նրան որոշակի փոփոխություններ մտցնել Իսրայելի նկատմամբ ունեցած իր վերաբերմունքի մեջ, քանի որ ԵՄ-ում Իսրայելի հանդեպ վերաբերմունքը միշտ աչքի է ընկել որոշակի կոշտությամբ եւ արաբներին ցուցաբերվող թեւ ոչ վճռական, սակայն զգալի աջակցությամբ: Թուրքիան, եթե ցանկանում է դառնալ ԵՄ-ի մաս, ապա պարտավոր է համաձայնեցված գործել Բրյուսելի ուղեգծի հետ: Անկարան անգամ հավակնում է հանդես գալ որպես Մեծ Մերձավոր Արեւելքում ԵՄ քաղաքականության հիմնական ուղեկցորդ, ինչպես հայտարարել էր դեռեւս երեք տարի առաջ Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Իսկ դա նշանակում է որոշակի նահանջ Երուսաղեմի հետ ռազմավարական դաշինքից:

Իհարկե, այդ նահանջը կտրուկ չի լինելու եւ կատարվում է քայլ առ քայլ: Առկա է նաեւ մի այլ գործոն, որն ազդեցություն է թողնում թուրք-իսրայելական հարաբերությունների որակի վրա եւ որը կապված է ներքաղաքական զարգացումների հետ: Թուրքիայի ներկայիս քաղաքական վերնախավը՝ ի դեմս կառավարող կուսակցության, տեւական պայքար է տանում երկրի ռազմական ընտրանու դեմ՝ գերիշխանության համար, իսկ գաղտնիք չէ, որ հենց զինվորականությունն է առավել սերտ կապերով կապված Իսրայելի հետ եւ ցանկանում է տեսնել նրան որպես Թուրքիայի տարածաշրջանային դաշնակից: Որքան «քաղաքացիական թեւի» դիրքերը երկրի ներսում ուժեղանան, այնքան կապերը Երուսաղեմի հետ թուլանալու են: Դա նշանակում է, որ Իսրայելը պետք է հաշվի նստի Թուրքիայի ներքին եւ արտաքին քաղաքականության փոփոխությունների հետ, որոնց վրա նրա ազդեցությունն այնքան էլ մեծ չէ:

Թուրքիայի աշխարհաքաղաքական եւ ներքաղաքական փոխակերպումը, այսպիսով, դառնում է նոր մտահոգություն իսրայելական արտաքին քաղաքականության ճարտարապետների համար, եւ նրանք, բնականաբար, պետք է հակակշիռներ փնտրեն՝ ի դեմս քրդերի եւ նույնիսկ հայերի, որոնց հետ հարաբերություններն առայժմ գտնվում են ճշգրտման փուլում:

## ՕՐԻԵՆՏԱԼԻՉՄԸ՝ ՈՐՊԵՍ ԴԻՍԿՈՒՐՍ

### *Արաքս Փաշայան*

Օրիենտալիզմը (կամ արեւելագիտությունը) արեւմտյան դիսցիպլին է, որն ինքնուրույն նշանակություն ստացավ եւ գիտական հիմքերի վրա դրվեց 18-19-րդ դարերում: Օրիենտալիզմի մեթոդաբանությունը, սակայն, վիճահարույց է եւ դարձել է առանձին տեսաբանների քննության առարկա:

1978-ին պաղեստինյան ծագումով ամերիկյան նշանավոր հասարակագետ ու նշակութաբան Էդվարդ Ուադի Սաիդի (1935-2003) հրատարակած «Օրիենտալիզմ» խորագրով ուսումնասիրությունը բարդ իրադրության առաջ կանգնեցրեց ժամանակակից արեւելագիտությանը, որը Սաիդի առաջ քաշած դրույթների տեսանկյունից կարող էր համարվել որպես կեղծգիտական:

Օրիենտալիզմի դիսկուրսի (իմա՝ քննախոսություն, բանավեճ, ճառախոսություն) իր մեկնաբանության մեջ Սաիդը քննության է առնում արեւմտյան հետազոտությունների օրիենտալիզմի ոլորտը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ գաղութային դիսկուրս: Այն ներկայացնում է դրույթների մի համակարգ՝ ստեղծված գաղութարարների հասարակություններում, որում գաղութացվածները կարող են իրենք իրենց տեսնել օտար պրիզմայով: Սաիդը ցույց է տալիս, թե ինչ տրամաբանությամբ կամ ինչ դիտակետից է նայում Արեւմուտքն աշխարհի ոչ արեւմտյան հատվածին:

Օրիենտալիզմը սահմանել է Արեւելքը ոչ թե աշխարհագրական (East), այլ նշակութային իմաստով (Orient): Գաղութացնել Արեւելքը՝ եվրոպացիների համար նշանակում էր ոչ միայն տնտեսապես տիրել նրան, այլեւ դարձնել այն խոհաժողովրդի առարկա: Արեւմուտքի համար Արեւելքը իրենից էապես տարբերվող Ուրիշ աշխարհ է: Արեւելքը մի տեղ է, որը կարելի է նկարագրել եւ ուսումնասիրել, բնակեցնել ու սովորեցնել, կառավարել ու միաժամանակ պաշտպանվել նրանից: Օրիենտալիզմը, փաստորեն, տիրապետելու, վերածնելու եւ նրան գերիշխելու արեւմտյան ոճ է: Սաիդը նշում է, որ առանց քննության առնելու օրիենտալիզմը՝ որպես դիսկուրս, անկարելի է հասկանալ խիստ համակարգված այս դիսցիպլինը, որով եվրոպական նշակույթն ի վիճակի

եղավ կառավարել եւ նույնիսկ ստեղծել Արեւելքը՝ քաղաքական, հասարակագիտական, ռազմական, գաղափարախոսական, գիտական եւ երեւակայական առումներով:

Սաիդի կարծիքով՝ օրիենտալիզմը ձեւավորվել է բրիտանական, ֆրանսիական եւ ամերիկյան՝ երեք մեծ կայսրությունների մտավոր եւ երեւակայական տիրույթում՝ որպես աշխարհի մասին իմպերիալիստական մի դիսկուրս, որն աչքի է ընկնում իր կեղծգիտական շեշտադրումներով, ինչը Սաիդը հիմնավորում է իր մի քանի փաստարկներում: Օրիենտալիզմը սիրում է Արեւելքն ուսումնասիրել իր հավաքականության մեջ՝ ինչ-որ չափով քարացած, վերացական ընդհանրացումներով: Այն չի ուզում եւ չի կարող հետազոտել Արեւելքում ապրող կենդանի մարդկանց ու կենդանի իրողությունները: Արդյունքում՝ Արեւելքը ներկայացվում է որպես մեկուսացված, ներփակ, անշարժ մի համակարգ, որպես Եվրոպայի կցորդ մի տիրույթ, որը տեղյակ չէ սեփական պատմությանը եւ մշակույթին, ի վիճակի չէ անգամ սահմանել ինքն իրեն: Այս բացը լրացնելու նպատակով Արեւմուտքը հանդես է գալիս Արեւելքի համար մշակույթ, պատմություն եւ ապագայի խոստում կերտողի դերում:

Օրիենտալիստական դիսկուրսը ընդգծված տարբերակում է մտցնում ռացիոնալ, զարգացած, հունանիստ, ամենաբարձր դիրքերում կանգնած Արեւմուտքի եւ մոլորության մեջ գտնվող, չզարգացած, ստորին դիրքերում հայտնված Արեւելքի միջեւ: Տարբերություններն ընտրվում են որպես ելակետ՝ Արեւելքին, նրա ժողովուրդներին ու առնչակից հիմնահարցերին վերաբերող տեսություններ մշակելու համար: Սաիդը համոզված է, որ Արեւելքի եւ նրա ժողովուրդների նկատմամբ Արեւմուտքի կիրառած համեմատական մեթոդն է ձեւավորել Արեւելքի եւ Արեւմուտքի գոյաբանական եւ իմացաբանական անհավասարության մասին սխալ պատկերը: Սաիդը գրեթե չի վարանում այն հարցում, որ Արեւելքի նկատմամբ Արեւմուտքի հետաքրքրությունը քաղաքական է, եւ որ օրիենտալիզմի ելակետն էլ առավելապես քաղաքական է:

19-րդ դարում Արեւելքի նկատմամբ Եվրոպացու ցուցաբերած հետաքրքրությունը շատ բանով պայմանավորված էր նրա գիտակցության մեջ, առաջին հերթին, այն գաղութ դիտարկելու հրամայականով: Սակայն այսբանով հանդերձ, օրիենտալիզմը միայն քաղաքական թեմա չէ: Այն ավելի շուտ աշխարհաքաղաքական գիտակցության տարածումն է գեղագիտական, գիտական, տնտեսական,

սոցիոլոգիական, պատմական եւ բանասիրական տեքստերի մեջ:

Ըստ Սաիդի՝ օրիենտալիզմի ակադեմիական եւ այս կամ այն չափով երեւակայական իմաստների միջեւ կատարվող փոխանակությունն անընդհատ է, իսկ 18-րդ դարի վերջից դրանց միջեւ հաստատվեց միանգամայն կանոնավոր երթևեկ: Օրիենտալիզմը՝ որպես տեսության եւ գործառույթի մի ամբողջություն, ստեղծվել է նշանակալից ներդրումների շնորհիվ՝ որպես Արեւելքի մասին գիտելիքի համակարգ, դառնալով բոլորի կողմից ընդունված մաղ՝ զտելու համար Արեւելքը դեպի արեւմտյան գիտակցություն: Այն ստեղծեց Արեւելքի միայն սխեմատիկ պատկերը, որ հարմար էր ուսումնասիրության համար, սակայն դրսեւորվում էր միտումնային ընդհանրացումներում, ինչի արդյունքում ի հայտ եկան հավաքական հասկացությունների վրա հիմնված վիրտուալ սահմանումներ:

Օրիենտալիզմը հիմնվում է հակադրությունների վրա՝ ստեղծելով հակոտնյա, ինչպես, օրինակ՝ «Եվրոպա–Ասիա» կամ «Արեւմուտք–Արեւելք», հասկացություններ: Մինչդեռ, Սաիդի կարծիքով, օրիենտալիզմը խեղաթյուրել ու աղճատել է գիտելիքը. փոխանակ դեպքերն ու երեւույթները տեղադրելու պատմական դիմամիկայի եւ փորձի մեջ, որ օրինաչափ է ողջ աշխարհի համար, օրիենտալիզմը, որպես կանոն, դրանք տեղադրում է հակադրությունների իր իսկ ստեղծած կարծրատիպերում՝ առաջ բերելով արհեստական երկփեղկվածություն: Ասվածի ապացույցն են օրիենտալիզմի դիսկուրսի մեջ հաճախ պատահող բեւեռները, ասենք, երբ մի կողմում արաբներն ու իսլամն են, մյուսում՝ քրիստոնյա Արեւմուտքը: Այդ իսկ պատճառով օրիենտալիզմը՝ որպես դիկտուրա, խիստ խոցելի է: Այն կարծրատիպային մտածողություն է, իսկ ավելի մեծ իմաստով՝ կարծրատիպային գործողություն:

«Բացահայտված» հակադրությունների շնորհիվ Արեւմուտքը օրիենտալիզմի միջոցով ի ցույց դրեց իր գերազանցությունը: Արդյունքում՝ ստեղծվեց Արեւելքի պարզունակացված մոդելը, որը ծառայում է Արեւմուտքի թե՛ տեսական-գաղափարախոսական, թե՛ գործնական-քաղաքական պահանջներին:

Արեւելքի արեւմտյան սահմանումն օգնեց ընկալել ու արժեւորել Եվրոպան (կամ Արեւմուտքը) որպես նրան հակադիր պատկեր, գաղափար եւ փորձառություն: Արեւմուտքն օգտագործեց Արեւելքը՝ որպես ակադեմիական ուսումնասիրման առարկա, որի միջոցով նաեւ հնարավոր եղավ մարդկության եւ աշխարհի մասին բազմաթիվ նպատակային տեսակետներ ձեւավորել:

Արեւելքը, դառնալով ուսումնասիրության եւ մտորումների առարկա, սկսեց կախվածության մեջ ընկնել արեւմտյան տարաբնույթ գիտնականների քմահաճություններից:

«Օրինտալիզմ» գրքի հրատարակումից տարիներ անց, 2003-ին, Իրաքի նկատմամբ ԱՄՆ քաղաքականությունը քննարկելիս, Էդվարդ Սաիդը նշում է, որ Արեւմուտքը շարունակում է դիտարկել Արեւելքը օրինտալիստական այն նույն՝ սուբյեկտիվ մոտեցմամբ, ինչը հարյուրամյակներ առաջ էր:

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԵՐԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ\*

*Գիտակցելով, որ աշխարհն ապրում է պատմության բեկունճային պահ, կանգնած է քաղաքակրթությունների բախման սպառնալիքի առաջ, որոնք յուրովի են ընկալում մարդուն եւ նրա առաքելությունը, Ռուսական ժողովրդական համաշխարհային ժողովն ընդունում է սույն հռչակագիրը:*

Մարդը, որպես Աստծո պատկեր՝ ունի բացառիկ արժեք, որը չի կարող խլվել: Այն պետք է հարգվի հասարակության, պետության, ամենքիս կողմից: Բարիք գործելով՝ անձը ձեռք է բերում արժանապատվություն: Այսպիսով, մենք տարբերակում ենք անձի արժեքն ու արժանապատվությունը: Արժեքը այն է, ինչը տրված է, արժանապատվությունը այն է, ինչը ձեռք է բերվում:

Բարոյականության հավիտենական օրենքը մարդու հոգուն ունի ամուր հիմք, որը կախված չէ մշակույթից, ազգությունից, կենսապայմաններից: Այդ հիմքը մարդկային բնության մեջ դրվել է Արարչի կողմից եւ արտահայտվում է խղճում: Սակայն խղճի ձայնը կարող է խլացվել մեղքով: Հենց այս պատճառով է բարին ու չարը տարբերելուն օժանդակելու կոչված կրոնական ավանդույթը՝ իր Սկզբնաղբյուրն ունենալով Աստծուն:

Մենք առանձնացնում ենք երկու ազատություն՝ ներքին ազատությունը չարից եւ բարոյական ընտրության ազատությունը: Ազատությունը չարից ինքնին արժեք է հանդիսանում: Ընտրության ազատությունը ձեռք է բերում արժեք, իսկ անձը՝ արժանապատվություն, երբ մարդն ընտրում է բարին: Ընդհակառակը՝ ընտրության ազատությունը տանում է ինքնախորտակման ու վնասում մարդու արժանապատվությունը, երբ նա ընտրում է չարը:

---

\* Սույն հռչակագիրն ընդունվել է այս տարվա ապրիլի սկզբին Մոսկվայում անցկացված Ռուսական ժողովրդական 10-րդ համաշխարհային ժողովի (Շօօր) կողմից: Այն առանձնակի երեւույթ է հոգեւոր-գաղափարախոսական ոլորտում այսօր աշխարհում տեղի ունեցող նոր վերափոխումներում եւ, անշուշտ, հետաքրքրական է նաեւ մեզ համար:

Մարդու իրավունքները հիմնվում են անձի արժեքի վրա եւ պետք է ուղղված լինեն նրա արժանապատվության իրացմանը: Հատկապես այս պատճառով մարդու իրավունքների պահպանումը չի կարող կապված չլինել բարոյականության հետ: Այդ իրավունքների խզումը բարոյականությունից նշանակում է դրանց խեղաթյուրում, քանզի անբարոյական արժանապատվություն չի լինում:

Մենք կողմ ենք ապրելու իրավունքին եւ դեմ՝ մեռնելու «իրավունքին», կողմ՝ արարելու իրավունքին, դեմ՝ «ավերելու» իրավունքին: Մենք ընդունում ենք մարդու իրավունքներն ու ազատություններն այնքանով, որքանով դրանք օգնում են անձի խոյանքին դեպի բարին, պաշտպանում նրան ներքին եւ արտաքին չարից, հնարավորություն ընձեռում դրականորեն դրսևորվել հասարակությունում: Այս լույսի ներքո՝ մեր կողմից հարգվում են ոչ միայն քաղաքացիական, քաղաքական իրավունքներն ու ազատությունները, այլեւ սոցիալական, տնտեսական եւ մշակութային իրավունքները:

Իրավունքներն ու ազատություններն անխզելիորեն կապված են մարդու պարտականությունների եւ պատասխանատվության հետ: Անձն, իր շահերն իրագործելիս, կոչված է դրանք համադրել մերձավորի, ընտանիքի, տեղական համայնքի, ժողովրդի, համայն մարդկության շահերի հետ:

Կան արժեքներ, որոնք մարդու իրավունքներից ստորադասելի չեն: Դրանք այնպիսի արժեքներ են, ինչպիսիք են *հավատը, բարոյականությունը, սրբությունները, հայրենիքը*: Երբ այդ արժեքներն ու մարդու իրավունքների կենսագործումը հակասության մեջ են մտնում, հասարակությունը, պետությունը եւ օրենքը պարտավոր են դրանք ներդաշնակեցնել: Չի՛ կարելի թույլ տալ այնպիսի իրավիճակներ, որոնց դեպքում մարդու իրավունքների իրականացումը կճնշի հավատն ու բարոյական ավանդույթը, կվիրավորի կրոնական եւ ազգային զգացմունքները, պաշտելի սրբությունները, կսպառնա հայրենիքի գոյությանը: Վտանգավոր է նաեւ այնպիսի «իրավունքների» «հայտնագործումը», որոնք օրինականացնում են ավանդական բարոյախոսության եւ բոլոր պատմական կրոնների կողմից դատապարտվող պահվածքը:

Մենք մերժում ենք մարդու իրավունքների բնագավառում երկակի ստանդարտների քաղաքականությունը, ինչպես նաեւ փորձերը՝ օգտագործել այդ իրավունքները քաղաքական, գաղափարախոսական,



ռազմական ու տնտեսական շահերի առաջնդման, որոշակի պետական եւ հասարակական կարգի պարտադրման համար:

Մենք մարդու իրավունքների ապահովման գործում պատրաստ ենք համագործակցել պետության ու բոլոր բարեմիտ ուժերի հետ: Այդպիսի համագործակցության հատուկ ոլորտներ պիտի լինեն ազգերի եւ էթնիկ խմբերի դավանանքի, լեզվի ու մշակույթի իրավունքների պահպանությունը, կրոնի ազատության եւ հավատացյալների՝ սեփական կենսակերպ ունենալու իրավունքի պաշտպանությունը, դիմակայությունը ազգային ու կրոնական հենքով հանցագործություններին, իշխանությունների եւ գործատուների կամայականություններից անձի պաշտպանությունը, զինծառայողների իրավունքների հանդեպ հոգածությունը, երեխայի իրավունքների պահպանությունը, կալանավայրերում ու սոցիալական հիմնարկներում գտնվող մարդկանց խնամքը, քայքայիչ աղանդների զոհերի պաշտպանությունը, մարդու անձնական կյանքի ու համոզմունքների վրա համապարփակ հսկողության անթույլատրելիությունը, դիմադրությունը հանցագործության, կոռուպցիայի, ստրկավաճառության, մարմնավաճառության, թմրամոլության, խաղամոլության մեջ մարդկանց ներգրավելուն:

Մենք ձգտում ենք տարբեր դավանանքների ու հայացքների տեր մարդկանց հետ երկխոսության՝ մարդու իրավունքների ու արժեքների հիերարխիայում դրանց տեղի հարցերում: Այսօր նման երկխոսությունը, ինչպես ուրիշ ոչինչ, կօգնի խուսափել քաղաքակրթությունների բախումից, հասնել մոլորակի վրա տարբեր աշխարհայացքների, մշակույթների, իրավական եւ քաղաքական համակարգերի խաղաղ զուգակցմանը: Թե մարդկանց որքանով կհաջողվի լուծել սույն խնդիրը՝ դրանից է կախված նրանց ապագան:

## ՄԱՅԻՍ 28-Ի ՈՒՂԻՆ\*

«Ձայն են տալիս եւ չեն արթնանում. ասում են եւ չեն լսում. կանչում են եւ ոտքի չեն կանգնում. փող են զարկում եւ կռուի չեն պատրաստում»:

Նարեկացու այս հոգեվիճակը երկար ժամանակ կնքեց նաեւ քաղաքական հայութեան ճակատագիրը:

Հայը չէր տրորում դարերի ճամբան, դարերն էին տրորում նրան: Նա չէր ճնշում պատմութեան սիրտը, պատմութեան ծանր մղձաւանջն էր ճնշում նրա սիրտը: Իր ցաւի եւ աշխարհի անցքերի հետ՝ հայը քշւում էր դէպի յաւիտենական անորոշը:

Մեր երջանկութիւնն ու անբախտութիւնը հենց նրանում է, որ կեանքը գաղտնիքներ ունի, ցաւը՝ թովչանք:

Եղաւ այնպէս, որ մի օր ցաւից ծնունդ առաւ մեր ապրելու խենթութիւնը: Ձայն տուին եւ հայը արթնացաւ. ասացին եւ լսեց. կանչեցին եւ նա ոտքի ելաւ. փող զարկեցին եւ նա կռուի պատրաստուեց. յարձակուեցին եւ նա գուպարի մտաւ. բախուեցին եւ նա յաղթական դուրս եկաւ:

Ի՞նչպէս հասունացաւ մեր կեանքի յղութիւնը. ի՞նչպէս ստեղծուեց հայոց պատմութեան այդ սրտաճնկիկ դէպքը:

Մայիս 28-ը կերպաւորող գործօններից առաջինը՝ դա ցեղի սպառնան վտանգն էր: Ո՛չ մէկ ոյժ կարող է այնպէս խռովել ժողովուրդների ոգին, ինչպէս ցեղօրէն սպառուելու վտանգը, որ օրհասական վայրկեաններում դառնում է հաւարի ահարկու աղաղակ: Հնից էր գալիս նա. մեր պատմական կեանքի բոլոր զգացումներն էին կուտակուած նրանում եւ այդ էր պատճառը, որ նրա թափը Մայիս 28-ին դարձաւ տարերային: Իսկ ուր տարերքն են շարժւում, այնտեղ ոգիների ովկիանն է ալեկոծւում. ուր ոգիների ալեկոծ խռովք կայ, այնտեղ պատմութիւնը նորատիպ փաստեր է արձանագրում:

Երկրորդ գործօնը՝ դա ճակատագիրը յաղթահարելու տենչն էր: Հնից էր գալիս եւ այս տենչը, որ մեր յեղափոխական շարժման օրերին արդէն վերածուել էր խանդի: Կա՛ր ինքնայաղթահարումի ճիգը: Գեղջուկ Սերոբը Նենրութի վրայ - դա հայ մարտական ոգու տիտանացումն էր:

---

\* Սույն գրութիւնը ամփոփումն է Հայկ Ասատրյանի ճառի, որը նա արտասանել է 1935թ. Սոֆիայում, Մայիս 28-ի տոնակատարության առթիվ: Հայրենիքում տպագրվում է առաջին անգամ:

Մեր պատմությունն արձանագրել էր այդ փառքը եւ կրկին չէր կարող մրոտուել: Մայիս 28-ին վտանգը բորբոքեց ինքնագերազանցումի կրակը: Իսկ ինքնագերազանցումը հոգու այն երկունքն է, որից միայն մի բան կարող է ծնել *յաղթանակը*:

Երրորդ գործունը [մարդկային] ամենաբարձր առաքինութեան նուիրումի որդեգրումն է՝ լայն զանգուածների կողմից: Նուիրումը այն հոգեվիճակն է, որում անհատը յանգում է իր բացարձակ ոգու յայտնութեան: Դա ցեղի կամքի շղթայագերծումն է անհատի մէջ: Յաւիտենականութեան կարօտի գերապրումն է դա, որ անհատին մոռացնել է տալիս ամէն անցաւոր բան եւ առաջին հերթին իր անձը: Ամէն նուիրում լինում է ցեղը յաւիտենականացնելու մտահոգութեամբ եւ ամէն նուիրուածի մէջ խօսում է ցեղի ձայնը:

Յեղը: Դա մշտեցի ճիրօն է, որ թշնամու անակնկալ յարձակման պահին, իր ձին տալիս է Սմբատին եւ ասում. «Ազատուի՛ր դու, որովհետեւ գործի համար աւելի՛ անհրաժեշտ ես»: Մնում է եւ մեռնում: Դա հայ աշակերտն է, որ Արագածի գլխին, 4.000 մէթր բարձրութեան վրայ Հայաստանի դիրքն է պահում. գիշերուայ տեղատարափ ձիւնից եւ լուսաբացի պարզկայից դառնում է մի սառցակոյտ եւ առաւօտուն, երբ մրրկախաղ ամպերի մէջ թշնամու հետախոյզներն է տեսնում հանդիպակաց կատարին, կանչում է իր պատանի ընկերներին. «Տղերք՝ սառած ենք եւ շարժուելու անընդունակ, փայտացած մեր ձեռքերով չենք կարող կրակել, բայց ոտքի ելնե՛նք եւ թուրքը թո՛ղ տեսնէ, որ Հայաստանը ապրում եւ շարժւում է Արագածի գագաթին»:

Դա հայ գեղջկուհին է, որ մտնում է Թալինի տաճարը. վառում է հոգու մոմերը եւ դուրս գալով՝ դառնում է գիւղական վաշտի կազմակերպիչը եւ առաջապահ մարտկուհին:

Ա՛հ, նուիրումի ի՛նչ սրտառուչ դէպքեր պատահեցին այդ օրերին հայոց աշխարհում:

Երբ նուիրումն է դառնում զանգուածային հոգեբանութիւն՝ ցեղը մտրակում է իր մտոյզը դէպի յաղթանակ:

Մայիս 28-ի յաղթանակով, հայը իր պատմութեան մէջ արձանագրեց մի քանի փաստեր, որոնք վճռական նշանակութիւն ունին մեր ապագայի համար:

1. Դէպքերի պարտադրումով հայերը ազգագրօրէն ամփոփուեցին իրենց հայրենիքի բնակեցնորոնում:

2. Նրանք հանոգուեցին, որ իրենց փրկութիւնը ազգային ճիգերի համադրութեան եւ միակամութեան մէջ է:

3. Նրանք տեսան, որ հայը միակամ եւ մարտունակ կարող է դառնալ միմիայն [ցեղային] հոգեբանութեան եւ զգացումի որդեգրումով:

4. Նրանք զգացին, որ վտանգի ժամանակ իրենց վիճակուած է մենակ մնալ, իսկ մենակութեան ողբերգութիւնը միշտ էլ կարող է հերոսականի վերածուել, երբ ժողովուրդը ուղղամտօրէն քայլում է ցեղի մատնանշած ճամբով:

\* \* \*

Այնժամ, մեր առջեւ կար իտէալը, այժմ՝ անորոշութիւնը: Այնժամ, մենք ունէինք ինքնակալ դառնալու կամք, այսօր՝ հայութեան մէկ մասը համակուած է աշխարհին հպատակ մնալու հոգեբանութեամբ: Հայը ուզում է տիեզերական ծառայ դառնալ եւ աշխարհն այդ «պատիւ»-ն անգամ զլանում է նրան: Նա աշխատանք է փնտռում եւ նրան ասում են - «դու աշխատելու իրաւունք չունես»:

Պատի՞ժ է սա, թէ՞ անարգանք. չգիտեմ:

Գիտեմ, սակայն, որ ամօթի զգացումը մի օր պիտի ցնցի զանգուածները:

Բացուած է մեր կեանքի բնական ուղին, եւ հայը, որ զուրկ չէ հպարտանքի զգացումից, մի օր կրկին պիտի կանգնի նրա վրայ:

Այդ ուղին նոր Մայիս 28-ի ուղին է:

Այդ ուղին նոր յաղթանակի ուղին է:

### **Հայկ Ասատրեան**

*«Ազատ խօսք», Սոֆիա, 1935թ.,  
8 յունիս, թիւ 28 (78)*

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տեր-Հարությունյան ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	1
Արտակ Շաքարյան ԹՈՒՐՔ ՄԵՍԽԵԹՅԻՆԵՐԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ .....	8
Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆ–ԱՄՆ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ .....	12
Սարգիս Հարությունյան ԹՈՒՐՔ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	16
Գագիկ Տերտերյան ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ. ՆՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ .....	21
Դավիթ Հովհաննիսյան ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓԱԿՈՒՂՈՒՄ .....	26
Վահագն Ազլյան ՆՈՐ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՄԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....	31
Սուրեն Սարյան ԻՍՐԱՅԵԼԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....	37
Արաքս Փաշայան ՕՐԻԵՆՏԱԼԻՉՄԸ՝ ՈՐՊԵՍ ԴԻՍԿՈՒՐՍ .....	43
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԵՐԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ .....	47
Հայկ Ասատրեան ՄԱՅԻՍ 28-Ի ՈՒՂԻՆ .....	50

*Շապիկի վրա պատկերված են  
Արաքս գետը և Կողբասարը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» և «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: